Azg
armenian daily

13 ՅՈՒՆԻՍ 1997, ՈՒՐԲԱԹ #109 (1363)

Գեներալ Լեսլի Քլարկը ՆԱՏՕ-ի նոր գլխավոր հրամանատա՞ր

12 ՅՈՒՆԻՍ, BBC. Հյուսիսատլանտյան դաշինքի ղեկավարությունը որոշեց, թե ով է դառնալու իր հաջորդ գլխավոր հրամանատարը: Դա ամերիկյան գեներալ Լեսլի Քլարկն է: Քլարկը տիրապետում է ռուսերենին եւ այժմ ղեկավարում է ԱՄՆ-ի ուժերը Լատինական Ամերիկայում: 2 տարի առաջ գեներալ Քլարկը Բոսնիայի վերաբերյալ դեյթոնյան համաձայնագրերը պատրաստող ամերիկյան միջնորդների թիմի անդամ էր: Լեսլի Քլարկի նշանակումը դեռ պետք է հաստատվի ամերիկյան Սենատում:

Քաղդաֆին պնդում է, որ թուրքական բանակը հրեաներն են ղեկավարում

ՏՐԻՊՈԼԻ, 12 ՅՈՒՆԻՍ, ՓԱՍՏ: Իսրայելի ու Թուրքիայի միջեւ հետզհետե խորացող զինվորական կապերի դեմ խիստ կեցվածք որդեգրած Լիբիայի նախագահ Մուամմար Քադդաֆին հունիսի 11-ին կոչին ենթադրեց այդ գործակցությունը եւ Հյուսիսային Իրաքում շարունակվող հակաքուրդ արշավն ու ավելացրեց, թե բանակն այդ միջոցառումներին է դիմում, որովհետեւ հրեաների կողմից է ղեկավարվում: Նա ասաց նաեւ, թե «խեղճ» իսլամ արմատական վարչապետ Նեջմեդդին Էրբաքանը նույնիսկ լուր չուներ, որ բանակը Հյուսիսային Իրաք է ներխուժել մայիսի 14-ին:

ԾԳՆԱԺԱՄ

Որո՞նք են ԱԺ նախագահի հրաժարականի իրական դրդապատճառները

Ինչպես տեղեկացրին Ազգային ժողովի մամուլի ծառայությունից, ԱԺ նախագահ Բաբկեն Արարքցյանը հրաժարականը ներկայացնելու հաջորդ օրը հունիսի 12-ին, աշխատանքի չի ներկայացել: Նախատեսված հանդիպումները հետաձգվել են, իսկ Իրայելի դեսպանին ընդունել է ԱԺ փոխնախագահ Արա Սահակյանը:

Ազգային ժողովի հունիսի 11-ի նիստում խորհրդարանի խոսնակ Բաբկեն Արարքցյանի հրաժարականի հայտարարությունը (որն, իհարկե, մերժվեց ձայների մեծամասնությամբ), իմ տպավորությամբ որոշ էր ոլորտ երկնքում: Ինչ խոսք, զինադադարության մասին օրենքի սեփական նախագիծ ներկայացնելը դարձյալ Արարքցյանի երկարամյա խորհրդարանական դրակտիկայում առաջինն էր, եւ դժվար է ասել, թե եթե նախկիններում դարձյալ այդպիսի մի դեպք լիներ՝ նա հրաժարական կդիմե՞ր, թե ոչ: Արտաքուստ, ինչ խոսք, ամեն ինչ շատ տրամաբանական էր՝ խորհրդարանի խոսնակը հնարավոր չի համարում աշխատել այն օրենսդիր մարմնի հետ, որի մեծամասնությունը համաձայն չէ իր ղեկավարի տեսակետին: Բայց արդյո՞ք սա այն սկզբունքային հարցն էր, որն իր ետեւից անհաղթահարելի դիտի բերեր հրաժարականի հայտարարություն: Մանավանդ, այն տպավորությունն առաջացավ, թե դարձյալ Արարքցյանը հրաժարական է տալիս ոչ թե իր կարծիքին հակառակ ընդունված օրենքի հետ սկզբունքային տարաձայնությունների, այլ դարձյալ դեպքերի ազդեցության ներքո: Ընդամենը, խորհրդարանի խոսնակը ամենից ավելի նեղացած էր այն բանից, որ «շատ բիրտ ազդեցություն է կատարվել խորհրդարանի վրա...»: Սակայն մի՞թե սա խորհրդարանի վրա «բիրտ ազդեցություն» գործադրելու առաջին դեպքն էր: Ուրիշ անգամ չէ՞ր եղել: Քի՞չ կարեւոր հարցերում ենք նկատել նույն «բիրտ ազդեցությունը», եւ մի՞թե ինքը, դարձյալ Արարքցյանը եւ նախկին Գերագույն խորհրդում, եւ մանավանդ ներկայիս Ազգային ժողովում հանդես չի եկել իրեն հենց այդպիսի ազդեցություն գործող իշխանությունների «ծանր հրեշանի»:

Ուրեմն, ի՞նչ է կատարվել իրականում: Պատահա՞կան էր, որ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը իսկույն առարկա հարցի քննարկման ժամանակ մեղմ ասած չոլատտանեց դարձյալ Արարքցյանի նախագիծը: Միգուցե ճի՞շտ է այն ենթադրությունը, թե հանրապետության նախագահն ու Ազգային ժողովի խոսնակը, երբեմնի «Ղարաբաղ» կոմիտեի ժայռակոփ միասնության վերջին կրողներից, այլեւս թեւ ու թիկունք չեն իրար: Ինչո՞ւ: Նախագահի նախընտրական քարոզարշավի ձախողման արձագա՞նքն է սա երկու լիդերների ակնհայտորեն սառած հարաբերություններում, թե՞ ավելի լուրջ դատճառ կա: Եվ եթե կա, ապա ո՞րն է այդ: Իսկ միգուցե սա մի բազմաբայլ կոմբինացիայի սկի՞զբն է, որի վերջնական նպատակը Ազգային ժողովի արձակումը եւ վաղաժամկետ խորհրդարանական ընտրությունների անցկացումը նախապատրաստելն է:

Ինչ խոսք, այս հարցադրումների իմ պատասխանները ես ունեմ: Բայց դրանք կարող են նաեւ սխալ լինել, ուստի առայժմ չեմ ուզում դարձնել հանրության սեփականությունը: Կցանկանայի, որպեսզի պետության բարձրագույն ղեկավարները իրենք հրապարակավ ցրեին բոլոր տարակուսանքները եւ մեկնաբանների իրավունքը:

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԹՈՒՐՔԻԱ

Անախադեպ զարգացումներ են սպասվում

12 ՅՈՒՆԻՍ, BBC, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Թուրքիայի վարչապետ Նեջմեդդին Էրբաքանը եւ կոալիցիայի իր գործընկեր Թանսու Չիլլերն այսօր Անկարայում 4-ժամյա բանակցություններ վարեցին՝ երկիրը ճգնաժամից դուրս բերելու ուղիների շուրջ: Չիլլերը հայտնեց, որ ավելի ուշ հանդես կգա հայտարարությամբ: Ավելի վաղ Չիլլերն Էրբաքանին կոչ էր արել իրեն փոխանցել վարչապետությունը մինչեւ հունիսի 18-ը՝ սպառնալով հակառակ դեպքում դուրս գալ կոալիցիայից: Էրբաքանն իր հերթին պահանջել է նախ որոշել վաղաժամկետ ընտրությունների օրը եւ փոփոխություններ կատարել ընտրական օրենքում: Էրբաքանը պահանջել է նաեւ օրենք ընդունել այն մասին, որ իր «Բարքություն» մահմեդական կուսակցությունը չի կարելի սահմանադրորեն լրել: Սակայն «ճշմարիտ ուղի» կուսակցության ներկայացուցիչները չեն վստահում Էրբաքանին եւ վախենում են, որ տվյալ օրենքի առկայության դեպքում նա ուղղակի կհրաժարվի իշխանությունը զիջել Թանսու Չիլլերին: Այն, ինչ կարող է տեղի ունենալ Թուրքիայում մոտակա օրերին՝ չունի նախադեպ:

Տնտեսական բարեփոխումների հարցում Հայաստանը օրինակ է ԱՊՀ երկրների համար

ԵՐԵՎԱՆ, 12 ՅՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը հունիսի 12-ին, ինչպես հայտնեցին նախագահի մամուլի ծառայությունից, ընդունել է ԱՄՆ-ի Անվտանգության խորհրդի աշխատակազմի Կովկասի հարցերով պատասխանատու Մայքլ Մաստերային եւ պետքարտուղարության Կովկասի բաժնի վարիչ Սթիվեն Յանգին:

Հանդիպմանը, որին մասնակցեցին ՀՀ նախագահի գլխավոր խորհրդական Ժիրայր Լիպարիտյանը, Հայաստանում ԱՄՆ-ի դեսպան Պիտեր Թոմսենը, քննարկվել են հայ-ամերիկյան երկկողմ հարաբերություններին վերաբերող հարցեր:

Մայքլ Մաստերան նշել է, որ տարածաշրջան կատարած իր այցն ուղղված է երկկողմ հարաբերությունների զարգացմանը եւ հայտնել, որ ԱՄՆ-ի նվիրվածությունը Հայաստանի անկախության ամրապնդման եւ բարգավաճման գործին մշտական է: Հյուրը նաեւ ավելացրել է, որ տնտեսական բարեփոխումների հարցում Հայաստանը կարող է օրինակ ծառայել ԱՊՀ երկրներին:

Լեւոն Տեր-Պետրոսյանը, կարեւորելով հայ-ամերիկյան հարաբերությունների զարգացումը, նշել է, որ ԱՄՆ-ի եւ Հայաստանի միջեւ չկան հակասություններ տնտեսական համագործակցության, պետական շինարարության, դեմոկրատական ինստիտուտների զարգացման հարցերում: Այդ պատճառներում Հայաստանը կհամագործակցի ԱՄՆ-ի հետ:

Էդվարդ Եգորյանին մերժեցին տեսակցել Վահան Հովհաննիսյանի հետ

Վերջերս մամուլից տեղեկացանք, որ մեկուսարաններում պահվող քաղբանտարկյալների հետ տեսակցելու ցանկություն են հայտնել նաեւ Ազգային ժողովի մի խումբ պատգամավորներ, որոնց թվում՝ ԱԺ պետահրավական հանձնաժողովի նախագահ Էդվարդ Եգորյանը: Վերջինս պատրաստ մինչեւ վերջ կատարելու գիտակցությամբ, ի թիվս այլոց, ցանկացել է տեսակցել նաեւ «31»-ի գործով ամբաստանվող ՀՅԴ Գերագույն մարմնի անդամ Վահան Հովհաննիսյանի հետ:

Մեզ հայտնի դարձավ, որ «31»-ի դատական գործը նախագահող Դավիթ Ավետիսյանը ավելի նրբանկատ գտնվելով, մերժել է պրն Եգորյանի տեսակցության դիմումը: Նրանց հանդիպումը նպատակահարմար չհամարելով միգուցե դատավորը ցանկացել է հիշեցնել, որ Վահան Հովհաննիսյանն ու «31»-ի գործով մյուս ամբաստանվողները Եգորյանի ու նրա համախոհների հետեւողական ջանքերի շնորհիվ հայտնվեցին մեկուսարանում:

Բինգյոլում կռիվ PKK-ի մարտիկների դեմ

12 ՅՈՒՆԻՍ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: «Անատոլու» լրատվական գործակալությունն այսօր հայտնեց, որ Թուրքիայի բանակը լայնածավալ հարձակում է ձեռնարկել երկրի արեւելքում՝ քուրդ անջատողականների դեմ: Հաղորդագրության համաձայն, մոտ 5 հազար թուրք զինվորներ օդուժի աջակցությամբ ռազմական գործողություններ են իրականացրել PKK-ի զինյալների դեմ Բինգյոլ նահանգում: 4 շաբաթ առաջ թուրքական բանակն անցել էր Հյուսիսային Իրաքի սահմանը՝ այսպես կոչված քուրդ ահաբեկիչներին ոչնչացնելու նպատակով: Թուրքիայի բարձրաստիճան զինվորականներն այսօր հերքեցին վարչապետ Նեջմեդդին Էրբաքանի հայտարարությունն այն մասին, թե այդ գործողությունները հաջողությամբ են ավարտվել եւ հայտնեցին, որ դրանք շարունակվում են:

Ողբերգություն Ստեփանակերտում

12 ՅՈՒՆԻՍ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Ստեփանակերտի Ֆրունզեի անվան 1 նոմերի դպրոցի 9-դասարանցի Գեղամ Գրիգորյանը հունիսի 11-ին դասերից հետո ինքնասպան է եղել: Դեռահասը դասերից հետո տանը մենակ է մնացել: Ինքնասպանության պատճառները հայտնի չեն:

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐ

Բորիս Ելցինը հղարտացավ, որ Ռուսաստանից էլ ոչ ոք չի վախենում

12 ՀՈՒՆԻՍ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինն այսօր հայտարարեց, թե իր երկիրն առաջվա պես միջազգային մեծ ուժ է եւ աշխարհը նրա նկատմամբ հարգանքի, այլ ոչ թե վախի զգացմունքներ է տածում: Անկախության օրվա առթիվ հեռարձակված իր ռադիոուղերձում Ելցինը շեշտեց, որ վերջին 80 տարվա ընթացքում առաջին անգամ Ռուսաստանի հեղինակության միջազգային ճանաչումը հիմնվում է ոչ թե վախի, ինչպես Ստալինի եւ մյուս առաջնորդների օրոք էր, այլ ժողովրդավարական նվաճումների վրա: Բորիս Ելցինը խոստովանեց, որ տնտեսական բնագավառում դեռ դժվարություններ կան, սակայն կարծիք հայտնեց, որ երկիրը ոտքի է կանգնում: Կոմունիստների եւ ազգայնականների սակավաթիվ մի խումբ անկախության օրը նշեց Մոսկվայի կենտրոնում կազմակերպված բողոքի ցույցով:

ՌՈՅԵՐ ԱՐՄԵՆՊՐԵՍ

Բիլ Քլինթոնը հայտարարեց, որ ՆԱՏՕ-ի ընդլայնումը պետք է առայժմ սահմանափակվի 3 երկրով

12 ՅՈՒՆԻՍ, RFI, BBC, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնն այսօր պաշտոնապես հայտարարեց, թե Միացյալ Նահանգները ցանկանում է, որ ՆԱՏՕ-ի ընդլայնման առաջին փուլը սահմանափակվի 3 երկրներով՝ Լեհաստանով, Հունգարիայով եւ Չեխիայով: Նախագահի այս կարծիքն այսօր Վաշինգտոնում հայտնել է Սոիսակ տան մամլո քարտուղար Մայք Մակքերին, ավելացնելով, որ ԱՄՆ-ի դիրքորոշումն այս հարցում հաստատուն է: ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Ուիլյամ Քոհենը այսօր նույնպես հանդես եկավ նույն առաջարկությամբ: Ուիլյամ Քոհենի կարծիքով՝ դաշինքի ընդլայնման դանդաղ տեմպը կօգնի դրամ խնայել եւ կդադարեցնի ՆԱՏՕ-ի միասնությունը: Պենտագոնի ղեկավարն այդ հայտարարությունն արեց ի պատասխան որոշ եվրոպական երկրների ճնշման, որոնք պնդում են, թե ՆԱՏՕ-ի թեկնածուների թվում ավելի շատ պետություններ է պետք ընդգրկել: Էստոնիայի արտգործնախարար Տոմաս Էլվիսը գերմանական «Բիլդ» թերթին տված հարցազրույցում այսօր հայտարարեց, թե ԽՍՀՄ նախկին մերձբալթյան հանրապետությունների թեկնածությունների հանումը ՆԱՏՕ-ի նոր անդամների ցուցակից վտանգ կներկայացնի ողջ Եվրոպայի համար: Իսկ ԱՄՆ-ի պաշտպանության փոխնախարար Վալտեր Սլոկոմբը հայտարարեց, որ Մադրիդի գագաթաժողովը, որտեղ պետք է վճռվի այդ հարցը, «Օսկարների գիշեր չէ, որտեղ հայտարարվում են հաղթողների եւ պարտվածների անունները»: Եվ ավելացրեց, «Դռները բաց կմնան մադրիդյան հանդիպումից հետո էլ»:

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

ՀՀ գերագույն դատարանում շարունակվում է «Սեպտեմբերի 25»-ի երրորդ եւ չորրորդ «մասերի» քննությունը, որ ընթանում է հարեւան դահլիճներում:

«Սեպտեմբերի 25/3»-ի երեկվա «գործողությունն» անցավ բարեխառն, գրեթե ուրախ մթնոլորտում: Դատախազի հարցին («Տեսե՞լ եք 3 ամբաստանյալներին»), Արտակ Գնունու պատասխանը «Իրավունք» թերթի Փանջունու անկյունում Կիմ Բալայանի դատասխանի «իմպրովիզացիայի» ոգով էր. «Չէ, էլի, չեմ տեսել», որին հետեւեց դահլիճի քաջալերիչ արձագանքը. «Մալադեց, Գնունի»: Մաղաք Տեր-Սարգսյանը դատավորի հարցին Արա Սահակյանի հետ բնամություն կամ բարեկամություն ունի՞, դատասխանեց. «Հարեւանություն ունեմ», բայց ցուցմունքը որեւեւ գործին չվերաբերող, չարձանագրվեց: Դատավորին հետաքրքրեց, թե, նկարագրելով ամբոխի գործողությունները, տուժողն ինչի՞ց է եզրակացրել, խոսքը 50-60 քաղաքացիների խմբի մասի՞ն է, թե՞ հատկապես ամբոխի: «Որովհետեւ ցանկապատի (ԱԺ-ի-Լ.Պ.) մոտ էին», դատասխանեց Տեր-Սարգսյանը, ինչին յուրովի արձագանքեց դեսական մեղադրողը «Ինչ է, ամբոխը քաղաքացիություն չունի՞»: Սասունիկ Պետրոսյանից տեղեկանալով, որ նա առաջին անգամ է տեսնում ամբաստանյալներին, նախագահողը հարցրեց բնամական կամ բարեկամական հարաբերություններ ունի՞ նրանց հետ հարուցելով տուժողի դատասանի եւ դահլիճի աչքուժությունը:

Գործով տուժող ճանաչված ԱԺ դատգամավորներ Վաչագան Հարությանը եւ Ավետ Գրիգորյանը չբարեհաճեցին ներկայանալ դատարան, եւ դատական կոլեգիան, դատավարության Ջանոյանի խորհրդով ընտրելով «ռացիոնալ լինելու» տարբերակը, վճռեց լսել ԱԺ դարեշի տեղակալ, վկա Խաչատուր Հովհաննիսյանին: Հովհաննիսյանը նույնպես ոչինչ չավելացրեց եղածին ասելով, թե «Գնունու դատասխանը «Իրավունք» թերթի Փանջունու անկյունում Կիմ Բալայանի դատասխանի «իմպրովիզացիայի» ոգով էր. «Չէ, էլի, չեմ տեսել», որին հետեւեց դահլիճի քաջալերիչ արձագանքը. «Մալադեց, Գնունի»: Մաղաք Տեր-Սարգսյանը դատավորի հարցին Արա Սահակյանի հետ բնամություն կամ բարեկամություն ունի՞, դատասխանեց. «Հարեւանություն ունեմ», բայց ցուցմունքը որեւեւ գործին չվերաբերող, չարձանագրվեց: Դատավորին հետաքրքրեց, թե, նկարագրելով ամբոխի գործողությունները, տուժողն ինչի՞ց է եզրակացրել, խոսքը 50-60 քաղաքացիների խմբի մասի՞ն է, թե՞ հատկապես ամբոխի: «Որովհետեւ ցանկապատի (ԱԺ-ի-Լ.Պ.) մոտ էին», դատասխանեց Տեր-Սարգսյանը, ինչին յուրովի արձագանքեց դեսական մեղադրողը «Ինչ է, ամբոխը քաղաքացիություն չունի՞»: Սասունիկ Պետրոսյանից տեղեկանալով, որ նա առաջին անգամ է տեսնում ամբաստանյալներին, նախագահողը հարցրեց բնամական կամ բարեկամական հարաբերություններ ունի՞ նրանց հետ հարուցելով տուժողի դատասանի եւ դահլիճի աչքուժությունը:

Գործով տուժող ճանաչված ԱԺ դատգամավորներ Վաչագան Հարությանը եւ Ավետ Գրիգորյանը չբարեհաճեցին ներկայանալ դատարան, եւ դատական կոլեգիան, դատավարության Ջանոյանի խորհրդով ընտրելով «ռացիոնալ լինելու» տարբերակը, վճռեց լսել ԱԺ դարեշի տեղակալ, վկա Խաչատուր Հովհաննիսյանին: Հովհաննիսյանը նույնպես ոչինչ չավելացրեց եղածին ասելով, թե

«ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25»

«Չէ, էլի, չեմ տեսել», ասում են ԱԺ աշխատակիցները

Նախորդ օրվա ընդմիջման ժամին Օնիկ Հունանյանի առողջական վիճակը կտրուկ վատացել էր (բժիշկները նախսինֆարկտային վիճակ էին արձանագրել), եւ դատավարության միջնորդությունից հետո ամբաստանյալի հափանման միջոցը փոխվել էր ամբաստանյալն ազատ էր արձակվել եւ դատաքննությանը մասնակցում է «սովորական մարդու» կարգավիճակով:

Երեկ լսվեցին այս գործով տուժող համարվող ԱԺ աշխատակազմի անդամներ Նարինե Բաղալյանի, Արտակ Գնունու, Մաղաք Տեր-Սարգսյանի, Սասունիկ Տեր-Պետրոսյանի եւ Կաղեն Խաչիկյանի ցուցմունքները: Տուժողները կամ առաջին անգամ էին տեսնում ամբաստանյալին, կամ տեսել էին դատաքննության (ճանաչման) ընթացքում: (Ճանաչումն, ըստ դատապաշտպան Ժորա Խաչատրյանի, տեղի էր ունեցել օրենքի խախտումով՝ տուժողներին սկզբում ցույց էին տվել ոչ թե ամբաստանյալներին, այլ նրանց լուսանկարները): Երբ նախագահողը Նարինե Բաղալյանին մատնացույց արեց տուժողի նախքննական ցուցմունքը, ըստ որի վերջինս նախորդ դատավարությունում Արա Սահակյանի հարցադարձին նշեց, որ հարցաքննության ժամանակ ինքն ասել է «նմա նեցնում եմ», ոչ թե «ճանաչում եմ», սակայն ցուցմունքում արձանագրվել է քննիչների տարբերակը: Վահե Վարանյանի դարագայում Բաղալյանը հիշում էր «բարձրահասակ մեկին», բայց վստահ չէր, թե տեսել է հատկապես նրան:

Դատախազի հարցին («Տեսե՞լ եք 3 ամբաստանյալներին»), Արտակ Գնունու դատասխանը «Իրավունք» թերթի Փանջունու անկյունում Կիմ Բալայանի դատասխանի «իմպրովիզացիայի» ոգով էր. «Չէ, էլի, չեմ տեսել», որին հետեւեց դահլիճի քաջալերիչ արձագանքը. «Մալադեց, Գնունի»: Մաղաք Տեր-Սարգսյանը դատավորի հարցին Արա Սահակյանի հետ բնամություն կամ բարեկամություն ունի՞, դատասխանեց. «Հարեւանություն ունեմ», բայց ցուցմունքը որեւեւ գործին չվերաբերող, չարձանագրվեց: Դատավորին հետաքրքրեց, թե, նկարագրելով ամբոխի գործողությունները, տուժողն ինչի՞ց է եզրակացրել, խոսքը 50-60 քաղաքացիների խմբի մասի՞ն է, թե՞ հատկապես ամբոխի: «Որովհետեւ ցանկապատի (ԱԺ-ի-Լ.Պ.) մոտ էին», դատասխանեց Տեր-Սարգսյանը, ինչին յուրովի արձագանքեց դեսական մեղադրողը «Ինչ է, ամբոխը քաղաքացիություն չունի՞»: Սասունիկ Պետրոսյանից տեղեկանալով, որ նա առաջին անգամ է տեսնում ամբաստանյալներին, նախագահողը հարցրեց բնամական կամ բարեկամական հարաբերություններ ունի՞ նրանց հետ հարուցելով տուժողի դատասանի եւ դահլիճի աչքուժությունը:

Գործով տուժող ճանաչված ԱԺ դատգամավորներ Վաչագան Հարությանը եւ Ավետ Գրիգորյանը չբարեհաճեցին ներկայանալ դատարան, եւ դատական կոլեգիան, դատավարության Ջանոյանի խորհրդով ընտրելով «ռացիոնալ լինելու» տարբերակը, վճռեց լսել ԱԺ դարեշի տեղակալ, վկա Խաչատուր Հովհաննիսյանին: Հովհաննիսյանը նույնպես ոչինչ չավելացրեց եղածին ասելով, թե

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ

Առանձնացվեց ցեղասպանության թանգարանի վայրը

«Արմինյան Միրոր Սփեթեյթըր» շաբաթաթերթի մայիսի 31-ի համարը տեղեկացնում է, որ Լոս Անջելեսի Ուեսթ Հիլ կոչվող արեւմտյան բլրալանջին ընդարձակ մի վայր է ընտրվել Հայկական ցեղասպանության հուշահամալիրի կառուցման համար:

Սան Ֆերնանդո հովտում գտնվող այս վայրը դյուրահասանելի է բոլոր կողմերից այնտեղ տանող լայն պողոտաների շնորհիվ: Այդտեղ իր տեսակի մեջ առաջինը կառուցվելու է մի հուշահամալիր, որը ծառայելու է եւ որպես թանգարան եւ որպես ուսումնասիրությունների կենտրոն: Ծրագրվում է ունենալ թանգարան, շրջապատված ընդարձակ պարտեզով, գիտաժողովների դահլիճներ եւ զանգվածային մեդիայի ու հեռազոտական աշխատանքների համապատասխան տարածքներ, որոնք կբավարարեն ինչպես լայն հասարակության, այնպես էլ մասնագետ-գիտնականների պահանջները:

Հուշահամալիրի կառուցման ծրագրին նեցուկ են կանգնել վարչական խորհրդի անդամները, որոնց թվում են ԱՄՆ սենատորներ, կոնգրեսականներ, գիտնականներ, կրոնական եւ հասարակական գործիչներ: Ոչ-շահութաբեր հասատությունը ղեկավարելու է Լոս Անջելեսում տեղավորված տնօրենների խորհուրդը:

ՀԱՄԱՌՈՏ

Գագիկ Հարությունյանը աշխատանքային այցով մեկնեց Ֆրանսիա

ԵՐԵՎԱՆ, 12 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հունիսի 12-ին 5-օրյա աշխատանքային այցով Ֆրանսիա մեկնեց ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը: Սահմանադրական դատարանում Արմենպրեսի թղթակցին հայտնեցին, որ հունիսի 12-ին եւ 13-ին Փարիզում նա հանդիպումներ կունենա Ֆրանսիայի Սահմանադրական խորհրդում, իսկ հունիսի 14-ին եւ 15-ին՝ տարբեր երկրներից Փարիզ ժամանած «Հայաստան» համահայկական հիմնադրամի տեղական հանձնախմբերի դատասխանատուների հետ՝ քննարկելու Արցախում իրականացվող ծրագրերի հետագա ընթացքը եւ այդ երկրներում հիմնադրամի տեղական հանձնախմբերի գործունեության հետ կապված հարցեր:

Նաիրա Մելքումյանը՝ Հայաստանում ԼՂՀ նոր ներկայացուցիչ

ԵՐԵՎԱՆ, 12 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ղեկավար Լեւոն Տեր-Պետրոսյանի հրամանագրով Հայաստանում ԼՂՀ մշտական ներկայացուցիչ է նշանակվել Նաիրա Մելքումյանը: Բանասիրական գիտությունների թեկնածու Նաիրա Մելքումյանը 1995 թ. մայիսից գլխավորում էր ՀՀ-ում ԼՂՀ մշտական ներկայացուցչի տեղակալի դատարանը, անմիջականորեն մասնակցել է Մինսկի խմբի շրջանակում դարաբաղյան հակամարտության կարգավորմանը նվիրված բանակցային գործընթացին: Մինչեւ ՀՀ-ում ԼՂՀ ներկայացուցչությունում աշխատանքի տեղափոխվելը նա զանազան դատարաններ է գլխավորել Հայաստանի Գերագույն խորհրդում, ՀՀ նախագահի աշխատակազմում եւ արտաքին գործերի նախարարությունում:

Մարսելում բացվեց հայ-ֆրանսիական առեւտրաարդյունաբերական դալաս

12 ՀՈՒՆԻՍ, ՀՖ: Մարսելում այսօր բացվեց հայ-ֆրանսիական առաջին առեւտրաարդյունաբերական դալաքը, որի նպատակների թվում է աջակցել սերտ հարաբերությունների հաստատում 2 երկրների տարբեր բնագավառների, առաջին հերթին ագրոարդյունաբերական ձեռնարկությունների միջեւ: Ինչպես նշեց դալաքի ղեկավար էռնեստ Սեֆերյանը, մրգահյութերի արտադրությամբ մասնագիտացած ֆրանսիական «Տեստրադակ» ձեռնարկությունը շուտով իր աշխատանքը կսկսի Հայաստանում:

ՈԵՊԼԻԿ

«Լրաբերը» դատրաստվում է նախագահական ընտրություններին

ԱԺ հերթական նստաշրջանի վերջին նիստում Բաբկեն Արարքցյանի հանկարծահաս հրաժարականը, հուրախություն «Լրաբերի», չընդունվեց: Դատելով այն դաբոսից, որով սիրելի «Լրաբերը» հայտնեց խորհրդարանական տխուր դրվագի ուրախ վերջաբանը, դեսական հեռուստատեսությունը եւ առաջին հերթին «Լրաբերը» թվում է 4 տարվա հեռվից արդեն դատրաստվում են առաջիկա նախագահական ընտրություններին: Եվ, քանի որ ՀՀ նախագահն այս անգամ կարծես թե չի դատրաստվում մասնակցել ընտրարշավին, «Լրաբերն» այդ դաբոսնում տեսնում է, թերեւս, ԱԺ խոսնակին: Ըստ իս, միայն այդ ենթատեքստում կարելի էր ընկալել «Լրաբերի» հաղորդավարուհու զգացմունքային (եւ զգայացուցիչ) հաղորդումն այն մասին, թե բազմաթիվ հեռախոսազանգերի հեղինակներ խիստ հուզված են Արարքցյանի հրաժարականի լուրից: Հուզված հեռուստաղիտողին էլ, հավանաբար, ուղղված էր հաղորդավարուհու գոտեմարտող դարզաբանումը. ԱԺ-ը չի ընդունել «դեսության կարեւորագույն հենասյուներից մեկի» կործանարար (գուցե, անկանխատեսելի՞) հեռեւանքներով հղի հրաժարականը:

Մի կողմ դնելով այն հանգամանքը, որ հուզմունք կոչվող հոգեվիճակը ձեւավորվում է ինչպես տխրության, այնպես էլ ուրախության դահին, սիրված եմ կասկածի տակ առնել «Լրաբերի» հաղորդավարուհու անհողդողդ համոզմունքը ԱԺ խոսնակի նկատմամբ ժողովրդի բարձր վստահության մասին: Այն դարզ դատճառով, որ Հայաստանի բնակչության մեծ մասը, մեղմ ասած, հիացած չէր ԱԺ խոսնակի ընտրություններում ունեցած դերակատարությամբ եւ անհրամարանական էր համարում վերջինիս նախագահի նախընտրական շտաբի ղեկավար լինելու դարագան:

Այնպես որ, «Լրաբերը», կարծում եմ, այս անգամ էլ ցանկալին իրականության տեղ է ընդունել կամ դարզապես կանխավ «ինքնակազմակերպվում է» 4 տարի հետո նախընտրական արշավին լավագույն մարզավիճակով ներկայանալու համար:

Լ. Պ.

ԴԱՏ

«Դրոյի» զանգատարկումների քննարկումը հետաձգվեց

Գերագույն դատարանի վճռաբեկ ատյանը՝ նախագահությամբ Գառնիկ Մինասյանի, զեկուցող Հենրիկ Դանիելյանի եւ անդամակցող Գեորգ Մաթեւոսյանի մասնակցությամբ, նախնական դատյանավորվածության համաձայն, հունիսի 12-ին լսելու էր «Դրո» գործով դատավճռի կասեցությամբ դատաքննության ներկայացրած զանգատները: Հիշեցնենք, որ հիշյալ գործով մեղադրող կողմի ներկայացրած միակ զանգատը Հրանտ Մարգարյանին էր վերաբերում, որը Հենրիկ Խաչատրյանի հանրադատության գլխավոր դատախազ նշանակվելուց հետո դատախազությունը ետ վերցրեց:

Գանգատների քննարկումը, սակայն, երեկ տեղի չունեցավ, քանի որ զանգատ ներկայացրած դատապարտյալներից երեքը՝ Ալբերտ Քարամյանը, որի դատապանյալներից մեկի նկատմամբ մահադատժի վճիռ է կայացվել, Ռուզաննա Հովհաննիսյանն ու Սուրեն Չերեզյանը չէին ներկայացել: Նախագահողը դեմ չէր նրանց բացակայությամբ քննարկումն սկսելու, եթե հարազատները չառարկեին: Սակայն հարազատները դեմ էին, իսկ դատապաններից ոմանք նպատակահարմար չհամարեցին առանց նրանց քննարկում ծավալելու, ուստի որոշվեց հետաձգել նիստը: Նախագահողը հայտարարեց, թե լրացուցիչ կտեղեկացնեն նշանակվելիք օրվա մասին:

Ս. Պ.

Գանձապետական հաշիվները՝ Կենտրոնական բանկում

ԵՐԵՎԱՆ, 12 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Մինչեւ հունիսի վերջ բոլոր գանձապետական հաշիվները, որոնք տեղական գանձապետարանները բացել են առեւտրային բանկերում, կտեղափոխվեն Կենտրոնական բանկ կամ նրա տարբեր մասնաճյուղեր:

«Դրանով իսկ մի օղակ հրթայից կհանվի եւ մենք ավելի արդյունավետ կկարողանանք սպասարկել բյուջեն», ասաց ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նորընտիր նախարար Արմեն Դարբինյանը, որը եւ այս բարեփոխման հեղինակն է:

Ներկայումս գանձապետարանը սպասարկում են երեք առեւտրային բանկեր՝ Ագրոբանկը, Հայէկոնոմբանկը եւ Արդշինբանկը:

ՇՈՒԿԱ

Ներքին արտադրատեսականին նույնպես կենթարկվի դարտադիր սերտիֆիկացման

ԵՐԵՎԱՆ, 12 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ կառավարության վերջերս ընդունած որոշմամբ որոշ լրացումներ են կատարվել Հայաստանում ապրանքների դարտադիր սերտիֆիկացում մտցնելու մասին 1994 թ. թիվ 417 եւ 1996 թ. թիվ 205 որոշումներում:

Հարկ է նշել, որ համաձայն 417 որոշման, դարտադիր սերտիֆիկացման էին ենթարկվում ինչպես ներմուծվող, այնպես էլ հանրապետությունում արտադրվող սահմանված ցանկով ապրանքատեսակները: Մինչդեռ 205 որոշմամբ արդեն ապրանքատեսակների ընդլայնված ցանկը վերաբերում էր միայն ներմուծվողներին:

Ինչպես Արմենպրեսի թղթակցին ասաց ՀՀ սանդարտացման, չափագիտության եւ սերտիֆիկացման վարչության սերտիֆիկացման բաժնի պետ Սամվել Մովսիսյանը, վերջին որոշումը վերականգնել է նախկին բովանդակությունը՝ դարտադիր սերտիֆիկացումը տարածելով նաեւ հանրապետությունում արտադրվող ապրանքատեսակների վրա: Ըստ նրա, 205 որոշումը հակասում էր հանրապետության միջազգային դարտականություններին եւ սերտիֆիկացման կանոնակարգերի միջազգային դահանջներին: Եթե սննդամթերքի որակի անվտանգության հարցն է առաջ քաշվում, ապա տարբերակում չդրսեւորվում է լինի ներմուծված եւ ներսում արտադրվող ապրանքների միջեւ: Նրա հավաստմամբ, 417 որոշման կիրառման դեպքում էլ ներսի արտադրողները խուսափում էին սերտիֆիկացնել իրենց տեսականին: Փաստորեն, այդ մտավախությունն այժմ էլ կա, քանի որ չկան հստակ կանոնակարգեր եւ արդյունավետ գործող մեխանիզմներ դեսական վերահսկողության, դատժամիջոցների կիրառման առումով: Այն հարցին, թե «Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման եւ սերտիֆիկացման մասին» վերջերս ընդունված օրենքը չի՞ ապահովում գործունեության դաշտը, դարոն Մովսիսյանը դատասխանեց, որ դրան զուգահեռ անհրաժեշտ են նաեւ ենթաօրենսդրական ակտեր, որոնք արդեն մշակված են եւ առաջիկայում կներկայացվեն հաստատման:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակություն է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի խմբագիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Տնօրէն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային
ծառայութիւն / 581841
Apple Macintosh
համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» դարտադիր է
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

տեղական

ՄԱՍՈՒՐ ԱՍՈՒԼԻՍ

Պարույր Հայրիկյան. «Կատարվել է կարեւոր քայլ...»

Հունիսի 12-ին ԻՄ-ի կենտրոնական գրասենյակում տեղի ունեցավ Պարույր Հայրիկյանի հերթական մամուլի ասուլիսը: Շնորհակալություն հայտնելով լրագրողներին, որ առանց նախապես ասուլիսի թեման իմանալու ներկայացել էին, ցրն Հայրիկյանը նշեց, թե այս անգամ խոսքը գնալու է ՀՀ կառավարության հունիսի 3-ի այն որոշման մասին, որով հանրապետական բյուջեի միջոցներից 100 միլիոն դրամ է հատկացվել խորհրդարանական կուսակցություններին: Որոշումը գնահատելով իբրեւ «կարեւոր քայլ» Հայաստանում ժողովրդավարության կայացման ճանապարհին, ցրն Հայրիկյանը նաեւ նշեց, որ դրամի բաշխումը կատարվել է «անբարո» եղանակով՝ ըստ խորհրդարանում խմբակցությունների ունեցած պատգամավորների թվի: Բերելով Միացյալ Նահանգների եւ Գերմանիայի օրինակները, ասուլիսը վարողն ընդգծեց, թե այնտեղ գումարը բաժանվում է հավասարապես: Պատկերավոր համեմատություն անելով ֆուտբոլի առաջնության հետ, նա ընդգծեց, թե որքան անարդար կլիներ, եթե գումարի կեսը հատկացվեր միայն 1-ին տեղը գրավողին: Սակայն, եթե նոդատակը մեկն է՝ ֆուտբոլի զարգացմանը սատարելը, ապա, ԻՄ-ի նախագահի կարծիքով, ոչ մի նշանակություն չունի, թե քիմը 1-ին տե՞ղն է գրավել, թե՞ 15-րդ: Բանգի մրցումներին մասնակցելու համար յուրաքանչյուր հավասար դիպուկ կատարելու կարիք ունի «ամենքս պիտի վարձի գնդակներ գնի...»:

Պրն Հայրիկյանը գտնում էր, թե յուրաքանչյուր խորհրդարանական կուսակցություն գոնե մարզկենտրոններում իր գրասենյակները բացելու հնարավորություն պիտի ունենա, մինչդեռ նրանց ֆինանսավորումը շատ սուղ է: Կոնկրետ ԻՄ-ը անցյալ տարի իր կազմակերպական կառույցները պահելու համար ծախսել է 21 միլիոն դրամ, «որը մեզ անհրաժեշտ գումարի կեսն է»: Նա հատուկ նշեց նաեւ, որ մինչեւ կառավարության որոշումն ընդունվելը իրենք, միջազգային փորձը հաշվի առնելով, նախագիծ են ներկայացրել, որը, սակայն, հաշվի չի առնվել, որովհետեւ կառավարությունը նախագահը միանգամից չի մերժել Ազգային ժողովի նոր ընտրություններ անցկացնելու իրենց առաջարկը, այլ դա համարելով «համակարգային մոտեցում պահանջող խնդիր» նշել է, թե ժամանակ է անհրաժեշտ առաջարկությունը ծանր ու թերեւ անելու համար: «Սակայն մենք այնքան միամիտ չենք, ասաց ասուլիսը վարողը, որ-ոնցգանի ստասնեք ամիսներ կամ նույնիսկ շաբաթներ...»:



Հարցերին պատասխանելիս (իսկ դրանք այս անգամ այնքան էլ շատ չէին) ասուլիսը վարողն անդրադարձավ հունիսի 13-ին նախատեսված համահայկական հանրահավաքից ունեցած իրենց սպասելիքներին, մի անգամ եւս շեշտեց, թե Վազգեն Մանուկյանն ԻՄ-ի համար այլեւս «Ազգային համաձայնության դաշինքի» միասնական թեկնածուն չէ, անդրադարձավ Ազգային ժողովում Բաբկեն Արարքցյանի հրաժարականի հարցին, իրեն հատուկ սրամտությամբ նկատելով, թե «երբ ինքը Բաբկեն Արարքցյանն էր մինչեւ այժմ ճնշում գործադրում Ազգային ժողովի վրա, դա համարում էր բնական ու թույլատրելի բան, իսկ երբ այդ նույն ճնշումն ընդամենը մեկ անգամ ուղղվեց իր դեմ սա գնահատվեց որպես ճգնաժամ»: Վերջում, պատասխանելով «Ազգի» հարցին, ցրն Հայրիկյանը չհամաձայնեց, թե ժողովրդի քաղաքական ակտիվությունն անկում է ապրել: Ըստ նրա այդ նվազումը ոչ ավելի քան 10 տոկոս է, եւ սա էլ բացատրեց հոգեբանական պատճառներով «Ժողովուրդը միշտ սիրում է հաղթողին, պարտված հերոս չի լինում, իսկ ընդդիմությունը հիմա պարտված է եւ խեղճ վիճակում է»:

Իմ հերթին, ես էլ համաձայն չեմ ցրն Հայրիկյանի այս, իմ կարծիքով, միակողմանի բացատրությանը, բայց այդ մասին մի այլ առիթով...

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

Շահումյանի անկման հինգերորդ տարելիցը

Այսօր Շահումյանի անկման հինգերորդ տարելիցն է: Այդ տխուր առիթով դիմում եմ թերթի բոլոր ընթերցողներին՝ մի՛ մոռացեք, որ Շահումյանի շրջանը փառավոր կռիվներ է մղել ադրբեջանական հրոսակների դեմ, իր կրծքով, տասնյակ զավակների արյան գնով թշնամու դեմ փակել է Լեռնային Ղարաբաղի հյուսիսային դարպասը: Իմացեք, որ շահումյանցին բազմաթիվ կորուստ ու զրկանք, տառապանք ու վիրավորանք ապրելուց հետո, վերադառնում է ԼՂՀ, շենացնում ամայացած հայ հողը եւ այդպես արդեն երեք գյուղ է ստեղծվել: Բայց շատերը կան, որ Հայաստանում համարյա թշվառ վիճակի մեջ են, զուրկ տարրական իրավունքներից ու գոյության տանելի պայմաններից: Շատերն էլ ցրված են աշխարհով մեկ, ապրում են կորստյան անդարմանելի ցավով ու կարոտով: Նրանց բոլորին ապրեցնում է միայն հայրենի հող վերադառնալու հույսը:

Չեզ եմ դիմում ԼՂՀ-ի ու Հայաստանի պետական, հասարակական գործիչներ, պահպանեք ու պաշտպանեք մեր ժողովրդի տառապյալ հաստվածի այդ սրբազան հույսը: Գործի դրեք Ձեր ամբողջ իշխանությունն ու կարողությունը՝ Շահումյան-Գեղաշենն ազատագրելու, բռնի տեղահանված բնակչությանը հայրենի օջախները վերադարձնելու համար:

Ձեզ եմ դիմում, ԼՂՀ-ի եւ Հայաստանի ընդդիմադիր ուժեր, աջակից եղեք այդ նվիրական գործին: Թող ամենուր, հայրենիքում, թե Սփյուռքում, հայությունը պաշտպան կանգնի շահումյանցիների արդար դատին:

Եվ Դուք, սիրելի շահումյանցիներ, որտեղ էլ որ գտնվեք, վայրկյան անգամ մի՛ մոռացեք մեր սուրբ հողը, դիմացեք, տոկացեք, լցվեք հույսով ու հավատով եւ, ամենագլխավորը, Ձեր ուժերը ներածին չափով մասնակից դարձեք մեր կորցրած գյուղերի ազատագրմանը՝ բարոյական, քաղաքական եւ մյուս ճակատներում:

ԿԻՄ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
ԼՂՀ Շահումյանի շրջանի «Մռավի դաղանջներ» հասարակական անվճար թերթի խմբագիր

ՊԵՏՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Աղագա լրագրողները ավարտաճառ են պաշտպանում

Երեկ Երեւանի պետհամալսարանի բանասիրական ֆակուլտետի ժուռնալիստիկայի ամբիոնում նույնպես ավարտաճառերի պաշտպանություն էր: 46 երիտասարդներ փորձում էին ամբիոնի վարիչ դոկտ. Գառնիկ Անանյանի, ավագ դասախոս Գագիկ Հովհաննիսյանի եւ հանձնաժողովի նախագահ, ռադիոհեռուստաթղթակցի տնօրեն Պերճ Ստեփանյանի եւ ընդդիմախոսների առաջ հիմնավորել իրենց դիպլոմային առաջ հաշած այս կամ այն թեզը, կարծիքը: Դժբախտաբար, միայն տղաները, ընդամենը 2 հոգի, ինչը հուշում է, որ մեր մամուլի ու լրատվության ասպարեզը աղագայում էլ առավելաբար կանանց մասնագիտություն է մնալու: Մխիթարական էր սակայն, որ ավարտականներից ոչ փոքրաթիվ մի խումբ պարզապես փայլուն ավարտաճառեր էին ներկայացրել եւ արտահայտվում էին բանիմացությամբ, գրագետ եւ կազմակերպված: Նրանք հատկապես այն սաներն էին, որ տիրապետում են օտար լեզուների, հետեւաբար ունեն ավելի լայն մտահորիզոն, եւ որպես կանոն արդեն աշխատում են թերթերում, ռադիոյում եւ հեռուստատեսությունում: Խիստ դրական է նաեւ այն, որ ամբիոնն ու դասախոսները ավարտաճառի համար բացառապես մեր այսօրվա մամուլի ու լրատվության մյուս միջոցներին վերաբերող թեմաներ էին հանձնարարել:

Ավարտաճառ էին պաշտպանում նաեւ «Ազգի» 3 արտահասթիային աշխատակիցներ՝ Ռուզան Ազիզյանը, Սուսաննա Շահբազյանը, Տաթեւիկ Հովհաննիսյանը: Ինչպես թերթում, այնպես էլ դիպլոմային իրենց աշխատանքները պաշտպանելիս նրանք հուսախաբ չարեցին դասախոսներին եւ խմբագրությանը:

Ռումբ անկախության համար

Արա Սահակյանի քաղաքական կողմնորոշումների պատմությունից

Խմբագրությունը համաձայն չէ իր աշխատակցի ստորեւ արտահայտած այն կարծիքին, որ հակադրվում է «Հայաստանի հարավային սահմանները Ռուսաստանին վստահած Ազգային ժողովի որոշման»-ը: Աշխարհն այնքան բարի եւ բարեգութ չէ, ինչպես ենթադրում են ոմանք: Մեր ժողովուրդը մեկ անգամ, այս դարասկզբին, մտել է այդ ջուրը եւ արյունոտված դուրս եկել: Ռուսական ռազմակայանների ներկայությունը արգելք չէ անկախ Հայաստանի զարգացմանը:

Ակնհայտ ու անվիճելի իրողություն է՝ յուրաքանչյուր քաղաքական հայտարարություն, բանավեճ, դիտարկում հասարակական որոշակի հնչեղություն է թողնում: Հասարակական միտքը, որքան էլ լինի աղաղաղականացված, յուրովսանն է արձագանքում քաղաքական գործիչների հայտարարություններին, քաղաքական իրավիճակներին իր գնահատականն է տալիս: Ասվածի մասին են վկայում ՀՅ Ազգային ժողովում Հայաստանում ՌԴ զինակայանների տեղակայման մասին պայմանագրի ստորագրման եւ ընդունման ողջ «գործընթացի» հասարակական արձագանքները: Դրանց արդյունքում խորհրդային ժամանակների կարոտախտով տառապող հասարակական որոշ շերտեր ոչ թե երազում, այլ հարբմնի տեսնում էին Հայաստանը Ռուսաստանի կազմում: Այդպես մտածողները չէին մոռանում նշել, չարախնդալ, թե «Լեւոնը վերջապես հասկացել է, որ առանց Ռուսաստանի Հայաստանը չի կարող գոյատեւել»: Նմանօրինակ գնահատականները ուղղակի արձագանքն էին 25 տարով Հայաստանի հարավային սահմանները Ռուսաստանին վստահած Ազգային ժողովի որոշման: Եվ եթե ԱԺ-ի պատգամավորների բացարձակ մեծամասնությունը քաղաքական գործիչներ չեն եւ նման փաստաթղթերի ընդունմանը «կողմ» էին քվեարկում՝ առանց խորանալու խնդրի մեջ, ապա նույնը չի կարելի ասել ԱԺ փոխնախագահ Արա Սահակյանի մասին: Վերջինս նախ ընդգծեց Ռուսաստանի հետ «հատուկ հարաբերությունների» հաստատման հույժ կարեւորությունը, ապա դեմարշ կատարեց Արեւմուտքի դեմ, նշելով, որ «մի քանի լիտր նավթով» Հայաստանը իր տառապանքը փոխհատուցված համարել չի կարող:

Արեւմուտքի դեմ այսօրինակ դեմարշը թելադրված էր ոչ միայն Հայաստանի շարունակական շրջափակմամբ, այլեւ, մեր համոզմամբ, միջազգային կազմակերպությունների կարծր գնահատականներով՝ 1995 թ. հուլիսի 5-ի խորհրդարանական, ապա՝ 1996 թ. նախագահական ընտրությունների վերաբերյալ: Իրադարձությունների զարգացման հաջորդ կանգառը կայացավ Ստանիսլավսկու անվ. ռուսական դրամատիկական թատրոնի շենքում, երբ մի խումբ մտավորականներ, հայկոմկուսի եւ Աշոտ Մանուչարյանի խանդավառ ներկայությամբ հայտարարեցին Ռուսաստան-Բելառուս դաշինքին միանալու հայ ժողովրդի միահամուռ կամքի մասին:

Անվիճելի է, որ մտավորականը իր ժողովրդի մեջ նախեւառաջ արժանապատվության զգացում է պարտավոր դաստիարակել, որը Հայաստանի դեպքում նշանակում է գուրգուրել, պահպանել անկախությունը: Խնդրի մյուս կողմն այն է, որ հայտարարություններն արվում են մի դաշինքին միանալու մասին, որը միտված է անհայտությանը եւ ձաղկվել է սեփական երկրներում:

Ռուսաստան-Բելառուս միությունը զուրկ է սկզբունքներից, մեխանիզմներից՝ պե՞տք է արդյոք Հայաստանին նման անհայտ բանի միանալ, երբ տնտեսական համագործակցությունը նույն ԱՊՀ-ի շրջանակներում առայժմ որեւէ էական ձեռքբերում չի ապահովում:

Իրադարձությունների այս փուլում դարձյալ լսվում է Արա Սահակյանի ձայնը, որը ՌԴ Պետդումայի Դաշնության խորհրդի նախագահ եղոր Ստրեւի հետ հանդիպումից հետո, թղթակիցներից մեկի հարցին, թե հնարավո՞ր է Հայաստանի մասնակցությունը Ռուսաստան-Բելառուս միությանը, պատասխանում է, որ «նման նախաձեռնությամբ Հայաստանում հանդես են եկել որոշ հասարակական-քաղաքական կազմակերպություններ, ռուսհայկական համագործակցությունը ունի զարգացման մեծ հեռանկար, դեռեւս օգտագործված չէ համագործակցության ողջ ներուժը, իսկ Ռուսաստան-Բելառուս միությանը Հայաստանի մերձեցումն արժանի է հատուկ ուշադրության» («Հայաստանի Հանրապետիւն», 10 հունիս):

Իրավունք ունի՞ արդյոք Արա Սահակյանը հանդես գալու նման հայտարարությամբ: Որպես քաղաքական գործիչ՝ անշուշտ, սակայն որպես պետական գործիչ նման իրավասություն Ազգային ժողովը, կարծես թե, նրան չի ընձեռել: Լավագույն դեպքում կարելի է ենթադրել, թե այս հայտարարությունը հակազդեցություն է ԼՂՀ-ի հարցի կարգավորմանն ուղղված ԱՄՆ-ի եւ Եվրոպայի մոտեցումներին: Սակայն... Սակայն այսօրինակ հայտարարությունների լաբիրինթոսներում Երեւանի եւ Հայաստանի մարզերի փողոցներով ու բնակարաններով սկսել են շրջել «նախաձեռնողների» խմբեր, որոնք ստորագրություններ էին հավաքում Հայաստան-Բելառուս դաշինքին Հայաստանի միանալու հարցը հանրաքվեի դնելու համար:

Եսխորհրդային Հայաստանում երկու կայուն եւ անուրանալի նվաճումներ են պահպանվում՝ Լեռնային Ղարաբաղի հանրապետության ազատագրումը եւ Հայաստանի անկախացումը՝ 1-ինը, կարծես թե, ժամանակ առ ժամանակ վտանգվում է, սակայն Հայաստանի անկախությանը դրսից վտանգ չի սպառնում: Վտանգը, պարզվում է, ներսից է: Օտարամոլությունը, ստրկամտությունը չթոթափած մեր հասարակության մեջ:

Ավելորդ ենք համարում հիշատակել մեր ներկա իշխանավորների ծնծղաները անկախության մասին, ավելորդ ենք համարում կարեւորել մեր արժեքային նոր համակարգի ձեւավորման մեջ անկախության դերն ու նշանակությունը:

Կա մեկ անվիճելի եւ զորեղ իրողություն՝ 1991 թ. սեպտեմբերի 21-ի անկախության հանրաքվեի արդյունքները: Եվ յուրաքանչյուրը, ով պայքարում է անկախության դեմ, պետք է պատասխանատվության ենթարկվի օրենքի ողջ խստությամբ:

Հակառակ դեպքում, մի օր կդառնանք Հայաստանի երրորդ հանրապետության վախճանի ականատեսներ:

ԼԵՎՈՆ ՏԱՐԱՅԱՆ

ՄԱՍՈՒԼ

Վանաձորում տպագրական ճգնաժամը հաղթահարվում է

Տպագրական գործընթացը Վանաձորում արդեն կարգավորվում է: Երեկ հունիսի 12-ին «Լոռու մարզ» թերթի հերթական համարը լույս տեսավ ՀՀ տեղեկատվության եւ գրահրատարակչության վարչության Վանաձորի տպարանում, որ ամբողջությամբ վերանորոգվել են պատճենահանող եւ տպագրական մեքենաները: Ինչպես տեղեկացանք «Տիր» ՍՊԸ տնօրեն Արմեն Բարսեղյանից, ընկերությունը շարունակում է գործել, ընդունել պատվերներ: Բացի «Լոռու մարզ» թերթը, «Տիրը» շարունակում է կատարել իր նախկին բոլոր պատվերները, ընդունել նոր պատվերներ եւ տպագրությունը իրականացնել պայմանագրային հիմունքներով՝ աղահովելով անհրաժեշտ որակ: «Տիրն» արդեն ստացել է ՀՀ գիտության եւ կրթության նախարարության թույլտվությունը՝ 9-10-րդ դասարանների հայերենի դասագրքերի տպագրության համար, սակայն նախարարությունը առայժմ ֆինանսական միջոցներ չի կարողանում հատկացնել պատվերն իրականացնելու համար: «Տիրը» փնտրում է հովանավորներ դասագրքերը տպագրելու նպատակով:

ՄԱՐԳԱՐԻՏ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Արշակ Չոպանյանը գրականագետ

Հսկայածավալ է Արշակ Չոպանյանի գրականագիտական ժառանգությունը: Գրականության տեսության, գրադասական եւ գրականության պատմության հարցերին նվիրված նրա ուսումնասիրությունները մեկտեղելու պարագայում տասը հաստափոր հատորներից ավելի կլինեն: Պարզապես կարելի կլիներ ստեղծել գրականագիտական յուրատեսակ մի հանրագիտարան, որի մեջ տեղ կգտնեն հայ գրականության պատմությունը Խորենացուց մինչեւ... Շիրազ, Հին աշխարհի, եվրոպական, արեւելյան, ռուսական գրականությունների շատ հարցերը: Այս ասպարեզի մեջ էլ Չոպանյանը հետաքնդում էր ժողովրդի լուսավորության ճանապարհով նրա ինքնաճանաչման թիրախը, նրա ճանաչողության սահմանների ընդարձակումը՝ աշխարհի գրականությունների լավագույն նմուշներին ծանոթացնելու միջոցով, ազգի երկու հատվածների մերձեցումը:

Հիմնական սկզբունքային ելակետը Իպոլիտ Տենի կուլտուր-պատմական մեթոդն էր, որը գրեթե տիրապետող էր անցյալ հարյուրամյակի ընթացքում ամբողջ Եվրոպայում, ու նաեւ՝ մեզանում: Ելնելով հենց այդ մեթոդից, Չոպանյանը գրական երեւույթները հիմնականում դիտարկում էր տեղի, ժամանակի եւ ազգային հողի եռամիասնական հայեցակետից:

Գրական սկզբնավորման շրջանում, սակայն, Չոպանյանը կանգնած էր ուրիշ դիրքերի վրա՝ իրապաշտական հայացքից բավականին հեռու: Այդ պահին նա ուղղակի կաղ չէր տեսնում արվեստի (գրականության) եւ հասարակության միջեւ: Արվեստագետը, նրա կարծիքով, երգում է թռչնի նման, որին բնավ չի հետաքրքրում իր շրջապատը: Նա պարզապես բնությունից ծրագրվածն է անում: Իսկ եթե շրջապատը զմայլվում է այդ երգով, կամ՝ ոչ, դա արդեն իր գործն է: «Գրականությունը, ինչպես բոլոր գեղարվեստը, էականապես ազնուապետական է, խուժանին հասկացողությունից բարձր եւ ընտրեալ ու սակաւաթիւ մարդոց միայն մատչելի», գրում է երիտասարդ Չոպանյանը: Պատահական չէ, որ նա վաստակեց «զուտ էսթեթի» համբավ, որը, ասես, իր հագուստի հղանցքատուն՝ միշտ հետեւեց նրան:

Շուտով, սակայն, Չոպանյանը որդեգրում է իրապաշտական հայացք:

«Պիտի ըսեն որ գրականությունը սփոփանք մըն է մարդուն համար, պէտք չէ զայն իրականութեան մէջ թաթաւել, այլ անկից վէր բարձրացնէ եւ «իդէականին մաքուր վերնագաւառաց մէջ տանի սաւառնեցնէ», իր ընդդիմախոսներին հեգնում է Չոպանյանը: -Ո՞ր վերնագաւառները, խնդրեմ, մարդ կրնա՞ իր կեանքէն, իր հոգիէն, ինքզինքէ դուրս ելլել... կը կարծե՞ք որ գործ մը ապրի առանց հիմ ունենալու մարդկային զգացում մը: Վերացման պէտքը, տեսլականի բաղձանքը, թռչելու մարմաջը, ասոնք կը հասկնանք, եւ ո՞վ ըսաւ, որ մենք թեւեր չունինք, ո՞վ ըսաւ որ մենք գէխէն ելած չունինք, այն ի՞նչ ողորմելի գրականութիւն պիտի ըլլար եթէ ամէն օր եւ միայն փողոցները նկարագրէինք... բայց եթէ երբեմն աչքերնիս դէպի ասպղերը կամ կապույտը կը վերցնենք, միշտ հողին վրա ենք, միշտ մարդերու մէջ, միշտ կեանքին մէջ»:

Տարիների հոլովույթում անընդհատ ու անընդհատ ամրապնդվում, կարծրանում են Չոպանյանի իրապաշտական դիրքորոշումները: Հենց տեսական այդ գեսնի վրա էլ կառուցվում են նրա գրեթե բոլոր գրադասական ու գրապատմագիտական հոդվածներն ու ուսումնասիրությունները:

Առաջին խոշոր աշխատասիրությունը եղավ «Պետրոս Դուրեանի կեանքն ու գործը», որն, ըստ էության, մեզանում սկզբնավորում էր գրականագիտական մենագրության ժանրը: Հենց այս ուսումնասիրության մեջ էլ Չոպանյանը հմտորեն կիրառում է տեղի ու ժամանակի, ազգային հողի եռամիասնական վերլուծության մեթոդը: Հեղինակը գտնում է, որ Պ. Դուրյանի օրերին «ինչ որ կարեւորն է դիտելու-բանաստեղծութիւնը անջատ չէր ժողովուրդէն, իր մէկ որոշ մասով՝ անոր համար եւ անոր մէջ կ'երկնուէր, անով կ'ապրէր, անորն էր», եւ այստեղից եզրակացնում է, թե Դուրյանի գործը «իր ժամանակի ոգիին խտացումն է»: Այն ամենը, ինչ վերլուծեց եւ վեր հանեց Չոպանյանը, նրա եզրակացությունները այսօր վաղուց դասագրային ճշմարտություններ են դարձել վաղամեռիկ բանաստեղծի մասին: Բայց հիշել է պետք, որ այդ ամենը առաջինը կատարեց Ա. Չոպանյանը:

Բարձր գնահատության է արժանի նաեւ Չոպանյանի մի ուրիշ մենագրությունը՝ Մ. Պեշիկթաշլյանի վերաբերյալ, որի մեջ վեր հանելով «հայոց մէջ գեղեցկութեան քարոզիչի եւ եղբայրութեան աւետարանիչի» դերն ու գործը, հետաքնդում է ուղղակի քաղաքական նպատակներ՝ սատարել հայոց միաբանության գործին: Պատահական չէ, որ նա Պեշիկթաշլյանից անում է քաղվածքներ, որոնք իր ժամանակի համար հույժ կարեւոր լիցք էին պարունակում: Այդ լիցքը այսօր իսկ չի կորցրել իր իմաստն ու նշանակությունը, ուստի պիտի կրկնենք այդ իմաստուն խոսքը.

«... Բայց սրտահառաջ ծայնիւ կը հրաւիրեմ զձեզ, կը հրաւիրեմ բոլոր ազգը, եւ ծուռ դնելով մեր պատմութեան անհուն դամբանին առջեւ, կը յորդորեմ զամենն ալ մէկդի դարձնել աչքերը աւերակաց վրայէն, վեր առնուլ գլուխներն անցելոց վիէն ու դիմաց նայիլ ու յառաջ քալել... յառաջ առ զարգացումն եւ առ լոյս, ու այդ անեզր ծամբորդութեանց դժուարութեանց ու վտանգաց մէջ զիրար աւելի աղեկ ճանչնալու համար «եղբայր» անուն տուէք, աւելի զօրաւոր եւ աննկուն ըլլալու համար ամենքդ ալ մէկ սիրտ եղէք եւ եթէ փորձնէ եւ արգելք բուռն զօրութեամբ կանգնին ձեր դիմացը, մի՛ երկնչիք անոնցմէ, ալեկոծմունք ու փոթորիկք աւելի յառաջ պիտի մղեն զմեզ ժամանակաց ծամբուն վրայ»:

Հայ նոր գրականությունը ժողովրդի մեջ տարածելը, արեւելահայ եւ արեւմտահայ հատվածների մտակայքի փոխադարձաբար իրար ծանոթացնելը թե՛ տեսական եւ թե գործնական կարեւոր խնդիր էր, որ իր առջեւ դրել էր Չոպանյանը: Դա առարկայնորեն առաջացած խնդիր էր, որ դարձել էր մեր կյանքի օրակարգի հարց երկու դարերի սահմանագծում: Չոպանյանի արժանիքն էր, որ նա ժամանակին ըմբռնեց կյանքի այդ պահանջը եւ նվիրվեց առաջադիմական այդ շարժընթացի իրականացմանը: Ընդսմին, առաջնություն եւ կարեւորություն տալիս էր այն գրողներին, որոնց ստեղծագործության բովանդակության եւ ձեւի մեջ տրփում էր հայկական, ազգային «նոթը», որպես բնորոշ էություն: «Աբովեանին մէջ է այն, ինչելով հոն ամէնեն հարուստ, ամէնէն հզօր, ամէնէն սուր ու պաշտելի ձեւովը, որ լսուած ըլլայ ազգի հայութեան մէջ»:

Խ. Աբովյանի, ինչպես նաեւ Վենետիկի Մխիթարյանների գործունեության մեջ Չոպանյանը, ըստ էության, տեսնում էր հայ ազգային գաղափարախոսության սաղմնավորման հիմնախարիսխը: Աբովյանի ծրագրի մեջ Չոպանյանը տեսնում էր. «Պահպանում ու զարգացում հայ ցեղին, հայ լեզուին, հայ գրականութեան, մուտ հայ տարրին՝ եւրոպական քաղաքակրթութեան մէջ, ահա ծամբան զոր Աբովեան կը ցուցնէր: Եւ Աբովեան անգին արժանիքն ունի այդ ծամբան առաջին ու դժնդակ ճիգով մը բացած ու լայն բացած ըլլալու...»:

Հենց այդ «եւրոպական քաղաքակրթութեան մէջ մուտքն» էլ նշանավորում էր որոշակի ազգային գաղափարախոսության սաղմնավորումը, քանի որ հիշյալ քաղաքակրթությունը տվյալ ժամանակահատվածում հասել էր ազգ-պետությունների ստեղծմանը, կամ այդ շարժընթացի մեջ էր:

Նման դեր Չոպանյանը վերապահում էր Մխիթարյաններին: Նրանց գործն ունեցավ պատմական նշանակություն, որովհետեւ «դիւրացուց ու կանոնաւորեց հայ ազգին ճիգը»: Չոպանյանը տեսնում էր Մխիթարյանների «գրքայնութիւնը», ժողովրդից կտրվածությունը, եւ այդ պասսաի վրա, ավելի արժեքավորում էր ժողովրդի ծոցում աշխատած մեր մտավորականությանը: Արեւմտահայ գործիչներ Շամուռնյանը, Միսակյանը, Գր. Օտյանը, Ոսկանյանը, Սվաճյանը, Պարոնյանը, Դուրյանը, Չիլինկիրյանը եւ արեւելահայեր՝ Աբովյանը, Նազարյանը, Նալբանդյանը, Բարխուդարյանը, Բաֆֆին, Արծրունին, Գամառ-Քաթիպան, Բերովբե Պատկանյանը, Մկրտիչ Էմինը «կատարած են գործ մը, -գրում է նա,- որ ոչ նուազ կարեւոր է, քան Մխիթարեանց գործը: Եւ ուրիշ տեսակէտով մը աւելի իսկ կարեւոր... Մոսկուվայի, Պոլսոյ, Թիֆլիսի եւ Իզմիրի գործիչները, ժողովուրդին մէջ ապրած, կրօնական կամ վարդապետական ոեւէ կապէ զերծ, եւրոպական քաղաքակրթութիւնն ընդունած՝ ոչ թէ կղերական, գիտական-աշխատանքային սահմանի մը մէջ լոկ, այլ իր ամէնէն կենսախայտ ու «նոր» ձեւին մէջ, կատարած են գործ մը աւելի կենդանի, ժողովուրդին ամբողջական պէտքերուն աւելի գոհացում տուող»:

Իր բոլոր գրականագիտական ուսումնասիրություններում Չոպանյանը անգիջում, բարձր պահանջներ էր ներկայացնում գեղարվեստական երկի արտահայտման ձեւին, կատարման արվեստին, կերպարների կերտմանը, մարդկային զգացումի ինքնաբուխ հոսքին, ոչ մի սակարկություն չէր ընդունում հանուն բովանդակության՝ ձեւի թերությունների հարցում, անհաշտ պայքարում էր քարոզամոլության, հրապարակագրության դեմ գեղարվեստական ստեղծագործության մեջ, պահանջում էր միտումի խոր թաքնվածություն: Միաժամանակ, կտրականապես մերժում էր անբովանդակ ձեւը: Բովանդակության մեջ էլ առավել գնահատում էր իրականության ինքնատատությունը, բանակալության դեմ բողոքը եւ ընդվզումը, ընկերային ախտերի մերկացումը, այդ ախտերի առթած մարդկային նկարագրերի եղծման պատկերումը, պահանջ էր դնում ոչ թե սփոփել հասարակության թարախապալարները, այլ բացահայտել մինչեւ արմատները:

Բնականաբար, հայ գրականության մեջ առաջնահերթ կարեւորություն էր ընծայում ուրիշների թվում՝ Պարոնյանին, Սվաճյանին, Շիրվանզադեին, Սունդուկյանին: Վերջիններին նա համարում էր մեր գրականության ամենակատարյալ իրապաշտները:

Հետաքրքրական է դիտել, որ Չոպանյանը նույն չափանիշներով էր գնահատում օտար գրականությունները, դրանք լայնորեն ներկայացնելով հայ ընթերցողին: Նա հատուկ հոգ էր տանում ռուս գրականության տարածման համար: Այդ գրականության մեծերին՝ Գոգոլին, Դոստոեւսկուն, Տոլստոյին, Տուրգենեւին, Գորկուն նա մտավորական բարերարներ էր համարում ամբողջ մարդկության համար: Գնահատելով Պուշկինին, մեծ պոետի այլեւայլ կողմերի թվում, շեշտում է, որ նա «ազատութեան ուղղուած գեղօններ յօրինած էր... հրատարակած էր բազմաթիւ հակակառավարական պարսաւագրեր ու երգիծանքներ»:

Լեհական բանաստեղծության մեծագույն դեմքին՝ Ա. Միցկեւիչին հայ ընթերցողին է ներկայացնում իբրեւ խոշոր մի հայրենասեր: «Ես ամբողջ ազգ մը կը սիրեմ,- քաղվածաբար բերում է Չոպանյանը: - Բազուկներուս մէջ ընդգրկեցի անոր բոլոր անցեալ ու ապագայ սերունդները, հոս՝ արտիս վրայ սեղմեցի «բարեկամի մը, սիրահարի մը, ամուսնի մը, հօր մը պէս... կ'ուզեմ իմ սիրելի հայրենիքիս դարձնել կեանքն ու երջանկութիւնը, կ'ուզեմ աշխարհիս հիացման առարկան ընել զայն»: Այս իղձերը հենց Ա. Չոպանյանինն էին, նաեւ:

Ընկերային կարգ ու սարքի քննադատության վրա շեշտը դնում է մասնավորապես եվրոպական գրականության վերլուծությունների առիթով: Չոպանյանը մեծ տեղ է վերապահում Ֆլոբերին, Բալզակին, Իբսենին: Բայց ահա թե ինչպես է ընկալում Դյումա Որդուն: «Ըմբոստացող մը չէր, հաշտեցնող մըն էր: Վտանգ չկար իրմէ: Եվ ընկերութիւնը զինքէ սիրած է... Իրեւն խորը երթալու չափ յանդուգն չէ եղած: Ընկերական կեանքին ամբողջութիւնը իր բոլոր փտութեամբ չէ հասկցած... ընդունած է ընկերական կազմուածքը ոգի՝ կտրուածներով: Չէ տեսած որ այդ ուր առաքելներն են նոր մեծ բարոյականի մը: Դիւմա հին բարոյականի ոսկեգործիչը եղաւ»:

Եթե մտաբերենք, թե ինչպես էր իր «Պզտիկ հայ գեղջուկին պատահարը» հեքիաթում Չոպանյանը պահանջում քանդել «Աստծո տունը», շրջել տիրող ընկերային կարգն ու սարքը, ապա նրա քննադատությունը Դյումա-Որդու հասցեին ավելի դյուրըմբռնելի կդառնա: Հենց Դյումա-Որդու քննադատության հենքի վրա ավելի ըմբռնելի է, թե ինչ էր ուզում ասել Չոպանյանը, երբ դրվատում էր Բալզակին, որը «արդէն սկսած էր իր հսկայական վէպերուն մէջ արդի ընկերութեան արիւնոտ տիղմը քրքրել», երբ նույնպես դրվատում էր Ֆլոբերին, որի գործերում «արդի ընկերութիւնը կը պատկերուի իր բոլոր զզուելի ու ծիծաղելի գիծերովը»:

Չոպանյանի հարցադրումը, անկասկած, գրեթէ ուղղակի արտահայտված է էմիլ Զոլային նվիրված նրա ուսումնասիրության մեջ: Չոպանյանը մերժում է տիրող գրականագիտության մեղադրանքը, թե Զոլան, իբր, հոռետես էր: Բայց Զոլայի լավատեսությունը նա բացատրում եւ կապում է ակնկալվող արմատական վերափոխման հետ: «Ու այդ բոլոր աղբի ու ցաւի մեայլ էենը կը լուսաւորուի խորին հաւատի մը ճառագայթով,- գրում է Չոպանյանը,- այն հաւատին, թէ կեանքի բոլոր տգեղութիւններուն ու աղտերուն մէջ կայ բան մը գերօրհնեալ եւ գերազնիւ՝ Աշխատութիւնը: Թէ այն օրն, որ արդի ընկերութեան եղեռնական անիրաւութիւնները պիտի քայքայուին ընդվզումին հերոսներուն ձեռքով, մարդիկ պիտի կարենան իրենց բոլոր ուժն ու հոգին նուիրել ամենայն ազատութեամբ աշխատելու, արտադրելու եւ իրենց աշխատութեան արդիւնքը արդարօրէն վայելելու, աշխարհը պիտի ըլլայ իրօք դրախտ, զոր ասուածաբաններ սխալմամբ մարդկային պատմութեան սկիզբը դրած են»: Զարմանալի մի երեւույթ, քաղաքական հայացքների մեջ ազատական էր Չոպանյանը, իսկ գրականության մեջ նրա հայացքներին հատուկ է տիրող իրավակարգի արմատական, հեղափոխական վերափոխման պահանջը:

Ժամանակակից սփյուռքահայ ու խորհրդահայ գրականության գոյավորման եւ զարգացման հարցերը նույնպես տեղ են գտել Չոպանյանի գրականագիտական զբաղմունքների մեջ: Նա առաջիններից մեկը փորձեց մշակել արեւմտահայ եւ սփյուռքահայ գրականությունների առնչությունների հարցերը, առաջիններից մեկը գնահատեց սփյուռքում երեւացող նոր տաղանդներին՝ Համաստեղից մինչեւ Շահնուր, մինչեւ Վահե-Վահյան: Ելնելով իր ուսումնասիրություններից նա մերժում էր տեսնել համատարած ամլություն սփյուռքի մտավորական ներուժի մեջ, մի բան, որ տարփողում էին առանձին գործիչներ եւ մամուլի օրգաններ 20-ական թվականներին: Չոպանյանը եղավ Համաստեղի տաղանդի առաջին գնահատողներից մեկը, շեշտելով, հատկապես, նրա իրապաշտությունը: Գրողը, ասում էր Չոպանյանը, «Մտած է իր նկարած տիպարներուն մորքին մէջ, խառնուած անոնց. իւրաքանչիւր պատմուածքի մէջ անոր դերակատարները միայն կը կմտնենք, որ կը շարժին, կը խօսին, կը գործեն՝ իրենց ուրոյն հոգեբանութեան համեմատ. հեղինակը քաղուն է անոնց մէջ, անոնց շարժիչ ուժն է»:

Հայ ազգային մշակույթի հետագա զարգացումը Չոպանյանը անվերապահորեն կապում էր Խորհրդային Հայաստանի հետ: Նրա քաղաքական հայացքների համար միանգամայն բնական է, որ Խորհրդային Հայաստանում ստեղծված «օրինելի պայմաններէն» ելնելով, հայ մշակույթի ապագան տեսնում էր լուսաւոր եւ «օրեղ բարգաւաճման սահմաններում»:

Այդ շրջանի Չոպանյան-գրականագետի համար խիստ բնութագրական են նրա հոդվածները եղիշե Չարենցի ստեղծագործության վերաբերյալ: Դեռեւս դարասկզբին, նա բարձր էր գնահատում Սիամանթոյի եւ Վարուժանի ընդվզող, հեղափոխական ոգին, պահանջում էր տիրող ընկերային իրականության արմատական քննադատություն, սեփական ստեղծագործության մեջ դնում էր աշխարհի կարգ ու սարքը կործանելու գաղափարը: Մեկ խոսքով, Չոպանյանը «սպասում էր» Չարենցի նման բանաստեղծի հայտնվելուն, եւ անհապաղ ողջունեց բանաստեղծին:

«Չարենցի երեւումը իբր նոր ասղ գրական երկինքին մէջ,- գրում է նա,- մեր ազգին վրայ խուժող խեղդիչ, սպանիչ, քանդիչ արհաւիրքներէն յետոյ, ամէնէն մխիթարական դէպքերէն է ներկայ ոռիթիս մեր ցեղին անկորուստ կենսունակութեան եւ քաղաքակրթական բարձր արժէքին վրայ մեր հաւատքը խորապէս զօրացնող»: Չոպանյանը Չարենցին համարում է «հայոց մեծագոյն բանաստեղծներէն մին», «մին ամէնէն ինքնաշիտ ու բազմազան բանաստեղծներէն, որ ոեւէ ազգի մէջ երեւան եկած ըլլան»: Նման բարձրագույն գնահատականները խարսխված են խոր վերլուծության վրա, որի ընդհանրացնող մտքերից մեկը հետեւյալն է. բանաստեղծի երկերը «ամենէն զօրեղ ու անձնադրոշմ արտայայտութիւններէն են Չարենցի, էջեր՝ ուր ամէն ինչ, մտածում ու ձեւ, ստեղծագործութիւնն են հեղինակին, մարդկային պատմութեան արտասովոր շրջանի մը ուղղակի ներգործութեան տակ երկնուած՝ այդ մեծ շրջանին հոգին արտայայտելու համար հարկ եղած ուժը ու շունչն ունեցող հերթողի մը կողմէ, որ խառնուածքի հազուագիւտ բարդութեամբ մը Հայնէի մը ճարտարական տրամտութիւնը կը միացնէ Վերհարնի մը դիւցազնական ամեհի աւիւնին»:

Պետք է արձանագրել հատկապես, որ նման գնահատականներ Չոպանյանը տալիս էր մի իրադրության մեջ, երբ Սփյուռքի մամուլի այլազան օրգաններ բնավ էլ նպաստավոր կարծիքներ չէին հայտնում Չարենցի մասին, իսկ «Հայրենիք» ամսագիրը պարզապես ոչնչացնող հրապարակումներ ունեցավ:

Հարկ է նշել նաեւ, որ դրվատալից հանդես գալով Խորհրդային Հայաստանում մշակույթի զարգացման հեռանկարների մասին, Չոպանյանը հատուկ տարահայտվում էր տիրող գաղափարախոսական հիմնադրույթների դեմ, որոնց համաձայն քարոզվում էր արվեստի եւ գրականության կուսակցականությունը: Նա իր հայացքները շարադրեց Փարիզի «Յարդգող» գրական ակումբի կազմակերպած «Արվեստը դասակարգայի՞ն թէ ազդասակարգային պետք է ըլլա» թեմայով հրապարակային բանավեճում, ինչպես նաեւ Բոստոնում ունեցած մի բանախոսության մեջ «Կուսակցություն եւ գրականություն» թեմայով:

Տարաբախտաբար, այդ տարիների սփյուռքի մամուլի առանձին օրգաններում երեւան եկան նյութեր, որոնցում բավականին նսեմացվում էր Հովհաննես Թումանյանի արվեստը: Ոմանք, նույնիսկ, նրա մանկական գրականությունից ի զատ, ոչինչ չէին տեսնում: Իսկ Ա. Չոպանյանի համար մեծ բանաստեղծը եղել է պատասխանի առարկա: «Կարելի է ըսել,- գրում է նա,- թէ նոյն ինքը հայ ցեղն է, որ անոր մէջ ինքզինքը կ'երգէր իր յատուկ զգայնութեամբ ու մտայնութեամբ, իր բնորոշ ոգով ու ճաշակով»: «Մեր գրականութեան մէջ մեղամաղձոտութիւնը, ողբը կը տիրէ,- շարունակում է Չոպանյանը:- Թումանյանի գործը փիրքում մըն է հոգեկան լուսաւոր ու արու առողջութեան, անոր երգը ուժի, զուարթութեան, հաւատի, լավատեսութեան պոռթկում մըն է, պայծառ ու խորխս նոյնիսկ ցաւի արտայայտութեան մէջ»

ԿԱՐԼԵՆ ԴԱՆԼԱՔՅԱՆ

ԱԶԳ

Միջազգային

Չիլլերը Թուրքիայում հարձակումների թիրախ էր, վերածվեց վարկաբեկման օբյեկտի

Թուրքիայի փոխվարչապետ եւ արտգործնախարար Թանսու Չիլլերի դեմ հարձակումները նոր թափ են ստացել երկրում: Սա, թուրքական իրականությանը խորթ երեւույթ չէ: Չիլլերի դեմ մեղադրանքներ էին հարուցվում դեռ 1993 թվականից սկսած, երբ ստանձնեց վարչապետի պաշտոնը: Նույնիսկ Մեջլիսում հարցաքննում էր արվել վարչապետ Չիլլերի ունեցվածքի եւ նրա անաբախաս եկամուտի աղբյուրների մասին: Ավելին, ընդդիմությունը «Մայր հայրենիք» կուսակցության նախագահ Մեսուտ Յըլմազի գլխավորությամբ համառորեն պահանջում էր

Էրբաքանն ու Յըլմազը մեծ տհաճություն են պատճառում Չիլլերին, բայց քանի որ վիրավորելու փաստն ինքնին փաստարկ չէ, ուստիեւ անկախ վիրավորելու միտումներից, հազիվ թե անձնական վիրավորանքը վարկաբեկման արդյունավետ միջոց լինի: Այդ առումով թերեւս շատ ավելի ազդեցիկ է «Բանվորական» կուսակցության նախագահ Դողու Փերինչեկի հայտարարությունը համապատասխան փաստարկներով հանդերձ:

Մայիսի 16-ին «Բանվորական» կուսակցության Ստամբուլի քաղաքային վարչությունում Փերինչեկը մամուլի ասուլիս է հրավիրել: Նա իր ելույթում մանրազնին ներկայացրել է, թե Չիլլերն ինչպես է հայտնվել ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական վարչության ծառայության մեջ: Ելույթի տեքստը հրապարակվել է «Այդընլըք» հանդեսում «Բանվորական» կուսակցության նախագահ Դողու Փերինչեկը բացահայտեց՝ Չիլլերը 1967-ից ի վեր ԿՀՎ-ին է ծառայում» խորագրով: «Հյուրրիյեթը» մայիսի 22-ի եւ 23-ի համարներում այն արտատպել է նույնությամբ:

Փերինչեկն իր ելույթում նշում է, որ 1967 թ. Չիլլերը, ավարտելով Ստամբուլում Ռոբերտ Քոլեջի տնտեսագիտության բաժինը, «Միացյալ Նահանգների շահերին ծառայելու պատրաստակամությամբ» դիմում է Անկարայում ԱՄՆ-ի դեսպանատուն: Նրա գործը զննվում է Թուրքիայում ԿՀՎ-ի բաժանմունքի, Թմրադեղերի հետ պայքարի կազմակերպության՝ DEA-ի եւ ԱՄՆ-ի պետքարտուղարության հետախուզության գրասենյակի՝ BRI-ի կողմից եւ դրվում է ընթացքի մեջ: Չիլլերն այսպիսով հաջողություն է կանգնում ԿՀՎ-ում: Նրան նշանակվում է ամերիկյան կրթաթոշակ եւ նա Անկարայում ԱՄՆ-ի դեսպանի հատուկ վիզայով մեկնում է Միացյալ Նահանգներ: Սա այն վիզան է, որ բացառիկ դեպքերում է տրամադրվում:

1969 թ. Չիլլերն ավարտում է Նյու Համփշիրի համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը: Նույն թվականին Կոնեկտիկուտի համալսարանում ձեռնամուխ է լինում դոկտորական թեզի պատրաստմանը: 1970 թ. նա այն պաշտպանում է, դրա հետ մեկտեղ ամերիկյան իշխանությունները նրան տրամադրում են Գրին քարդ: Փերինչեկը գտնում է, որ այդ քարդը 1970 թ. օգոստոսի 10-ին ԱՄՆ-ի արդարադատության նախարարության որոշումով Չիլլերին է տրամադրվել Կոնեկտիկուտի նահանգի Հաթֆորդ քաղաքում: Իսկ համապատասխան փաստաթուղթը գրանցվել է A 149 33 25 N 95 համարի տակ:

«Թանսու Չիլլերը, ասում է Փերինչեկը, հաճախ է պնդում, թե իր ուսումը կատարելագործել է Յեյլի համալսարանում: Մինչդեռ, համալսարանի շրջանավարտների ցուցակում նրա անունը բացակայում է: Բացարձակ այս սուտը նպատակ է հետապնդում ողողարկել նրա պատրաստվածությունը, որ նա 1970-71 թթ. անցել է Վիրջինիայում ԿՀՎ-ի Comp Peary կոչվող ճամբարում: Սա Վաշինգտոնից մի քանի ժամ հեռավորության վրա է գտնվում, գաղտնագրված է The Farm անվան տակ»: Այնուհետեւ Փերինչեկը շարունակում է. «Վերոհիշյալ ճամբարում անցած պատրաստվածությունն ԱՄՆ-ի իշխանությունների աչքում կարեւորեց Չիլլերի նշանակությունը: Նրան, որպես վստահելի կադրի, աշխատանքի հրավիրեցին պետքարտուղարության Մերձավոր Արեւելքի եւ Հյուսիսային Աֆրիկայի բաժնում որպես այդ երկրների ռազմաքաղաքական պատասխանատու քարտուղարության աշխատակից: Նա իր աշխատավարձը ստանում էր ԿՀՎ-ի գաղտնի ֆոնդից: Միաժամանակ Չիլլերը դասախոսական աշխատանքի է անցնում երկրի առաջնակարգ հաստատություններից Ֆրանկլին Մարշալի քոլեջում:

1971-73 թթ., որ նա դասախոսեց այնտեղ, ստանում էր 1800 դոլար աշխատավարձ: 1973 թ. ապրիլի 23-ին Չիլլերը ԱՄՆ-ի քաղաքացիություն ստանալու նպատակով դիմեց իշխանության համապատասխան մարմիններին: Նրա դիմումը ձեւակերպվել է հետեւյալ համարի տակ. «No:D.O.74 23 44, Code:ORT, S 1/107-284 F.M.E.»:

Փերինչեկը գտնում է, որ 1974 թ.-ին ԿՀՎ-ն նպատակահարմար գտավ Չիլլերին գործուղել Թուրքիա: Նրանից պահանջվում էր Թուրքիայում ԿՀՎ-ի բաժանմունքի համար պարբերաբար զեկուցագրեր պատրաստել թուրքական կառավարության եւ զինված ուժերի կազմում հակամերիկյան դրսեւորումների մասին՝ հետեւելով համապատասխան գործունեությանը: Ծառայության դիմաց նրան նշանակվեց ամսական 100 հազար դոլարի աշխատավարձ: Ավելին, որպես ԿՀՎ-ի ծառայության մեջ գտնվող անձ, նա 1979 թ. հունիսի 1-ի որոշմամբ ստացավ ԱՄՆ-ի քաղաքացիության իրավունք: Որոշումը ձեւակերպվեց Ph 195 000 318 գրանցման համարով:

«Այն փաստը, որ Չիլլերը, եզրակացնում է Փերինչեկը, ԿՀՎ-ի ծառայության մեջ է, չի կարելի անտեսել: Ուրեմն, հանձին Չիլլերի, ինչպես նախարարների, այնպես էլ Ազգային անվտանգության խորհրդի նիստերին մասնակցում է նաեւ ԿՀՎ-ն: Վարչապետ Էրբաքանը կրում է ԿՀՎ-ում ծառայության մեջ գտնվող անձնավորության հետ կառավարություն կազմելու պատասխանատվությունը: Համանման պատասխանատվություն կրում է նաեւ «Ճշմարիտ ուղի» կուսակցությունը, քանի որ այդ նույն անձնավորությունն է ղեկավարում նրան: Սա վիրավորական է բոլորի համար, ուրեմն Չիլլերից ձերբազատվելը բոլորի պարտքն է Թուրքիայում»:

Դողու Փերինչեկը գտնում է, որ Չիլլերին ԱՄՆ-ի քաղաքացիություն է տրամադրել ԿՀՎ-ի տնօրենը: Թե ովքե՞ր են վերոհիշյալ տվյալները Փերինչեկին տրամադրել՝ հայտնի չէ: Պարզապես ակնհայտ է՝ Չիլլերի վարկաբեկման թիկունքում քաղաքական, նուրբ հաշվարկների առկայություն է: Քանի որ վարչապետ Նեջմեթթին Էրբաքանը պատրաստվում է Մեջլիսի վաղաժամկետ ընտրություններ անցկացնել երկրում, իսկ դա ենթադրում է միջկուսակցական պայքարի սրում, ուստիեւ Չիլլերի վարկաբեկումը կարելի է պայմանավորել նախատեսվող ընտրություններով: Միաժամանակ առկա են նաեւ աջակենտրոն երկու կազմակերպությունների՝ «Մայր հայրենիք» եւ «Ճշմարիտ ուղի» կուսակցությունների միավորումն արագացնելու, դրա իրագործման պարագայում միավորված կազմակերպության ղեկավարի հարցը հոգուս Մեսուտ Յըլմազի լուծելու ձգտումները: Սակայն Չիլլերի վարկաբեկման առումով, շատ ավելի մեծ դեր են խաղում զինվորականության միտումները: Հատկապես այն դեպքում, երբ վերջինս պահանջում է, որպեսզի Էրբաքանն իրեն հանձնի վարչապետի պաշտոնը: Գաղտնիք չէ, որ վարկաբեկված Չիլլերը վարչապետի պաշտոնում անհամեմատ կառավարելի կլինի, քան Էրբաքանը: Իսկ դա անհամեմատ կդյուրացնի գործադիր իշխանությունների գործունեությունը վերահսկելու առաջադրանքի իրագործումը զինվորականության համար:

ՀԱՅՈՒԹ ՉԱՔԲՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ

Ուկրաինան եւ Իրանը տնտեսական համաձայնագիր ստորագրեցին

ԿԻԵՎ, 12 ՀՈՒՆԻՍ, ՓԱՍՏ: Ուկրաինայում գտնվող Իրանի արտգործնախարար Ալի Աքբար Վելայաթին իր պաշտոնակից Գենադի Ուդովենկոյի հետ ստորագրեց երկու պետությունների տնտեսական գործակցությունը սերտացնող համաձայնագիր: «Այս համաձայնագրի հիմնական նպատակն է զարկ տալ առեւտրական ու տնտեսական համագործակցությանը», հայտարարեց Ուդովենկոն, ստորագրության արարողությունից հետո: Վելայաթին ավելացրեց, թե մոտ ապագայում Իրան է այցելելու էներգետիկայի գծով Ուկրաինայի պետական նախարար Անատոլի Մինչենկոն, ինքնելու Իրանից նավթ ներմուծելու կարելիությունները:

Ռուսաստանի տնտեսությունը այս տարի եւս նահանջ արձանագրեց

ՄՈՍԿՎԱ, 12 ՀՈՒՆԻՍ, ՓԱՍՏ: Չնայած այս տարվա առաջին ամիսներին ստեղծված լավատեսությանը, Ռուսաստանի տնտեսության մայիս ամսվա տվյալները բացահայտել են այն իրողությունը, որ տնտեսությունն այս տարի եւս, հավանաբար, անկում կարձանագրի եւ միայն առաջիկա տարվա ընթացքում կարելի է աճ ակնկալել: Մայիս ամսվա տվյալներով, տեղական համախառն արտադրությունը 0.4 տոկոսի անկում է արձանագրել անցյալ տարվա մայիսի տվյալների հետ համեմատած: Սա նշանակում է, թե այս տարվա առաջին հինգ ամիսներին ոչ միայն հնարավոր չի եղել ակնկալված աճն իրականացնել, այլեւ նահանջ է արձանագրել: Տնտեսագետները գտնում են, որ այս տարվա ընդհանուր նահանջը կարող է 2 տոկոսի հասնել, սակայն ակնկալելի է, որ յոթ տարվա շարունակական անկումից հետո 2 տոկոսի աճ կարձանագրվի 1998-ին:

Չուբայսն անցած տարի 300 հազար դոլար է վաստակել

ՄՈՍԿՎԱ, 12 ՀՈՒՆԻՍ, ՓԱՍՏ: Անցյալ մարտին առաջին փոխվարչապետ նշանակված Անատոլի Չուբայսն անցյալ տարվա ընթացքում նախագահ Բորիս Ելցինի եկամուտի ավելի քան յոթնապատիկն է վաստակել, շնորհիվ իր ունեցած եկամուտների եւ բաժնետոմսերի առեւտրի: Կառավարության ընդդիմադիրների գլխավոր թշնամին համարվող Չուբայսն անցյալ տարի շուրջ 300000 դոլար է ստացել եւ 92000 դոլար եկամտահարկ վճարել: Ելցինն անցյալ տարի 42000 դոլար է վաստակել, իսկ Ռուսաստանում միջին ամսական աշխատավարձը 145 դոլար է:

Փոլա Ջոնսի ախտաժակը բացվել է

Պոկերի խաղագումարը աճում է

Փոլա Ջոնսի իրավաբան Ջիլբերտ Դեյվիսը հայտարարեց, որ խուսափելու համար սեռական ոտնձգությունների մեղադրանքը դատարանում քննարկելուց, նախագահ Բիլ Քլինթոնը սխալված է հստակորեն ընդունել, որ հիշում է Ջոնսի հետ հանդիպումը Լիթլ Ռոքում (Արկանզաս) 1991-ին, ինչպես նաեւ այն փաստը, որ նրան է տվել կանխիկ դրամ փոխանցելու «կարեւոր» համաձայնությունը փոխհատուցելու նրա հեղինակությանը հասցված վնասը:

Ջիլբերտ Դեյվիսը մի հարցազրույցում ասել է, որ Ջոնսի գործը մինչեւ դատավարությունը «փակելը» Քլինթոնի համար խիստ կարեւոր է, եւ նախագահը մի շարք ուժեղ փաստարկներ է ներկայացնելու, որոնք նպատակ են ունենալու հասարակության ուղեղում ցրելու կասկածները Ջոնսի բացասական վարքի վերաբերյալ: Համաձայն այդ փաստարկներից մեկի՝ «Ջոնսը ներկայացվում է որպես հեշտությամբ «չզիջող» մի կին, որը դժվար թե սեռական հարաբերությունների մեջ մտներ նահանգապետի հետ»:

Դեյվիսը պնդում է, որ նախագահը ընդունի այն փաստը, որ հանդիպել է Ջոնսին, մի հանդիպում, որը հաջորդել էր համաձայնություն ձեռք բերելու 94-ին կատարված բանակցություններին: Այդ ժամանակ Քլինթոնն ասել էր, որ նման հանդիպում չի հիշում: Ջոնսի իրավաբանը պնդում է, որ Քլինթոնի որեւէ հայտարարություն անարժեք կլինի եւ չի վերականգնի Փոլայի հեղինակությունը, եթե նախագահը շարունակի պնդել, որ չի հիշում այդ հանդիպումը: Ակնհայտորեն ոգեւորված Գերագույն դատարանի որոշումից, ըստ որի Քլինթոնը չի կարող կասեցնել գործի քննությունը մինչեւ նախագահի պաշտոնում պաշտոնավարելու ավարտը, Դեյվիսն ասել է, թե այժմ հավատում է, որ տիկին Ջոնսը կարող է դրամական փոխհատուցման հասնել. «Պոկերի գինը բարձրանում է, ասել է Դեյվիսը. մենք հավատում ենք, որ Ջոնսի հեղինակության անկման պատճառով նրան հասցված վնասը կփոխհատուցվի»:

Դեյվիսը չի ասել, թե հայցվոր կողմը որքան փոխհատուցում է պահանջելու, թեեւ հայտնի է, որ գումարը 700 հազարից ավելին է լինելու:

Իր հերթին Քլինթոնի անձնական իրավաբան Ռոբերտ Բենեթը հայտնել է, որ որեւէ երկյուղ չունեն դատաքննության վերաբերյալ:

«ԻՆՏԵՐՆԵԹԻ ՀԵՐԱԼՈ ՏՐԻԲՅՈՒՆ»

Էմիրաթները կլցվեին սեւ խավիարով

11 ՀՈՒՆԻՍ, RFI: Վկայակոչելով վրացական աղբյուրները ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը հաղորդեց, որ Թբիլիսիի օդանավակայանում մաքսային ծառայությունը հայտնաբերել է Արաբական Միացյալ Էմիրաթներ տարվելու համար նախադատարկված 1335 կգ սեւ խավիարի խմբաքանակ, որը մաքսային հայտարարագրում պաշտոնապես նշված էր որպես 5900 դոլար ընդհանուր արժեքով ձկան պահածո: Սակայն բեռի իրական արժեքը մասնագետների գնահատմամբ կազմում է 120 հազար դոլար: Գործակալության տվյալներով ձերբակալվել է 1 մարդ:

Նամիբիան կկարողանա՞ վաճառել իր փղոսկրը

Զիմբաբվեի ու Բոտսվանայի աջակցությունը վայելող Նամիբիան այս ամսին Հարարեում անհետացող «տեսակների» առեւտրին նվիրվելիք միջազգային խորհրդաժողովում մտադիր է խնդրել փղոսկրի իր պահեստարանը սահմանափակ քանակությամբ վաճառելու թույլտվությունը: Հիշեցնենք, որ փղոսկրի առեւտուրն ամբողջ աշխարհում արգելված է 1989 թ. ից ի վեր

«ԼՔՍՊՐԵՍ»

ԱԶԳ

Մշակույթ

Օ՜, գրքերի աշխարհը տիեզերք է անեզր...

Չարենցի մեջ աշակերտական տարիներից մշակվել էր անհագ ու բուռն ընթերցանության սովորույթ: Նրա հոգեւոր մտերմությունը գրի հետ սկիզբ է առել տակավին Կարսում ուսանելու տարիներին: Նա օգտվում էր ոչ միայն ռեալական դպրոցի, այլեւ Կարսի քաղաքային գրադարանից: Գրքեր էր վերցնում նաեւ իր դասընկերոջ Նիկոլայ Պոլյակովից: Ռեալականի գրադարանավար եւ կրոնի ուսուցիչ Արշակ Փորուղյանի ու եզարյանի մոտ: Իր ավագ եղբոր մասին հայտնում է, որ Կարսի ռեալական դպրոցն ավարտելուց հետո 1918-ին ընդունվել է Թիֆլիսի Միխայելովյան հետեւակային զինվորական դպրոցը, ավարտելուց հետո ստացել է փոխգնդապետի, գնդապետի եւ գեներալի զինվորական կոչում, եղել է Եղիշեի ամուսնության քավորը:

Չարենցի, որպես գրքասերի եւ ընթերցասերի գրքագիտական-մատենագիտական իմացությունը կուտ կառուցվածք ունի: Ստեփանի վկայությամբ, Մոսկվա կատարած առաջին ուղեւորության ժամանակ, ընդունվել է Շանյավսկու հանրածանոթ համալսարանի դպրամագական ֆակուլտետը, առնչվել է Բրյուսովի, Բլոկի, Եսենինի, Մայակովսկու, Սոլոգուբի, Վյաչեսլավ Իվանովի հետ:

Կարսի ռեալականի դպրերի ներսում եւ հետո Չարենցի ամենասիրելի հեղինակը Վահան Տերյանն էր: Տերյանի պոեզիայի ազդեցությունն են կրում Եղիշեի վաղ շրջանի բանաստեղծությունները, հատկապես նրա անդրանիկ ժողովածուն:

Ռեալականի իր դասընկերոջ Թաքոսի հետ լինելով վերջինիս ծննդավայր Ախալցխայում, մեծ դժվարություններով գնում են Ջավախք, այնտեղից ձիով Վահան Տերյանի ծննդավայր Գանձա, այցելում պատմական բանաստեղծի ծնողներին եւ հարազատներին: Տերյանական վայրերից վերադառնալով Կարս, գրական խմբակի «արտահերթ» նիստ է հրավիրում, նվիրված սիրելի բանաստեղծին, որից հետո լուսանկարվում են: Չախից առաջինը Եղիշե Սողոմոնյանն է, կողքին նստած է Լիդարիս Մխչյանը, որի հիշատակին է նվիրված 1928-ին գրված «Իմ ընկեր Լիդոն» պոեմը: Սղիտակ գլխարկով կանգնածը Թաքոսն է, նրա կողքին կանգնածը բարձրահասակ Վարոս Արաբյանն է, նստածը Արշաուս Ալեքսանդրյանը, կանգնածը տեսորահար Օնիկ Ղազանչյանն է:

Տերյանի մահվան բոթը Չարենցին հասավ ուշացումով, եւ նա արարեց «Վահան Տերյանի հիշատակին» սքանչելի մի բանաստեղծություն:

Եղիշե Չարենցը տասնյոթ տարեկանում գրեց «Աքիլլա» պոեմը, տասնութում «Դանթեական առասպելը», երեք տարի անց «Սոմա»-ն եւ «Ամբոխները խելագարված»: Բազմադարյան գրականության պատմությունը հազիվ թե նման դեպք հիշի: «Մահվան տեսիլը» քառերեքամյա երիտասարդի գրչով է արարվել, որ մայրենի լեզվով հայ ժողովրդի բախտի մասին 1500 տարվա ընթացքում գրված բացառիկ գործերից է:

Չարենցը թարգմանել է Վերհարն, Գյոթե, Ռեմարկ, Գորկի, Մայակովսկի, Բրյուսով: Նա գրամոլ էր: Այդ կենս բառով ասվում է գրեթե ամեն ինչ: Դեռ կենդանության ժամանակ Չարենց երեւույթի դիմանկարը ստեղծելու համար Մարտիրոս Սարյանը դիմեց եզիպտական դիմակներին: Եվ, այնուամենայնիվ, նրա համար որպես բանաստեղծական հանճարի խորհրդանիշ մնացին Դանթեն, Պուշկինը եւ Գյոթեն: «Ոչ մի բանաստեղծ, ոչ մի պոետ գրել է Չարենցը, ինձ այնպես չի դիշեի միջեւ տեղի է ունեցել հետեւյալ երկխոսությունը:

– Դու երկու օրում վերադարձնում ես գրադարանից վերցրած հատորները:

– Ես պիտք սկզբից մինչեւ վերջ ուշադրությամբ կարդում նկարները էլ եմ նայում: Ուզո՞ւմ եք պատմեմ:

– Դե, պատմիր, տեսնեմ:

– Մի շնչով կարդացի Բաֆիու «Խենթը»: Հիանալի է Բայազետի դպրոցական տեսարանը: «Խենթը» շատ խենթություններ արեց...

– Լավ ես լեզվիդ տալիս: Երեւում է, որ կարդացել ես ի հաշիվ վաղվա դասերի: Վաղն առաջին դասը կրոնի դասն է: Քեզ եմ հարցնելու:

– Կուզեմ հենց հիմա հարցրեք: Դասս «անգիր» գիտեմ:

Հոր՝ Աբգար աղայի տված փողով, կոշիկի փոխարեն, գիրք է գնում:

– Տո՛, դու խելքդ հացի հետ ես կերել, բոբիկ ոտիդ ման գաս, հը՞...

– Լավ է ոտիցդ բոբիկ լինեմ, քան թե խելքից:

– Էս մեր փիլիսոփան ճաշի ժամանակ էլ մի ձեռքով գիրք է բռնում, մյուսով բանաստուրի գդալը:

Նա գիրքն ու գրականությունը դիտում էր որպես ձեւի եւ բովանդակության ամբողջություն, գեղարվեստական ներդաշնակ մի կառույց: Երբ ռեալական դպրոցում ճնարկում էին նրա գրական երախայրիքը՝ «Երբ երգ տխրադալուկ աղջկան» ժողովածուն, եւ դիտողություններ եղան ստեղծագործությունների ձեւի մասին, տասնհինգամյա պատանին կրակեց.

– Ա՜յ տղա, դու պատկերացնո՞ւմ ես գեղեցիկ մի կնիկ փնթի հագնված ու բարիքփված: Ըստ գիրքն էլ էդպես բան է...

Այս բացառիկ լուսանկարում պատկերված է Եղիշե Սողոմոնյանի անդրանիկ ժողովածուի ճնարկումը գրական առաջին քայլերն անող Կարինե Քորանջյանենց տանը: Ձախից Եղիշեն է, նրա դիմաց նստածը ռեալականի աշակերտ, գրական խմբակի զեկավար Ստեփան Աղաջանի Ստեփանյանն է: Եղիշեի կողքին կանգնածը Աննա Եղիազարյանն է, Ստեփանի քույրը: Նստած աղջիկը Կարինե Քորանջյանն է, նրա կողքին նստած տղան տեսորահար Օնիկ Ղազանչյանն է: Լուսանկարը դասավորվել է Աննա Եղիազարյամբ: Մոսկվա կատարած առաջին ուղեւորության ժամանակ, ընդունվել է Շանյավսկու հանրածանոթ համալսարանի դպրամագական ֆակուլտետը, առնչվել է Բրյուսովի, Բլոկի, Եսենինի, Մայակովսկու, Սոլոգուբի, Վյաչեսլավ Իվանովի հետ:

Կարսի ռեալականի դպրերի ներսում եւ հետո Չարենցի ամենասիրելի հեղինակը Վահան Տերյանն էր: Տերյանի պոեզիայի ազդեցությունն են կրում Եղիշեի վաղ շրջանի բանաստեղծությունները, հատկապես նրա անդրանիկ ժողովածուն:

Ռեալականի իր դասընկերոջ՝ Թաքոսի հետ լինելով վերջինիս ծննդավայր Ախալցխայում, մեծ դժվարություններով գնում են Ջավախք, այնտեղից ձիով Վահան Տերյանի ծննդավայր Գանձա, այցելում պատմական բանաստեղծի ծնողներին եւ հարազատներին: Տերյանական վայրերից վերադառնալով Կարս, գրական խմբակի «արտահերթ» նիստ է հրավիրում, նվիրված սիրելի բանաստեղծին, որից հետո լուսանկարվում են: Ձախից առաջինը Եղիշե Սողոմոնյանն է, կողքին նստած է Լիդարիս Մխչյանը, որի հիշատակին է նվիրված 1928-ին գրված «Իմ ընկեր Լիդոն» պոեմը: Սղիտակ գլխարկով կանգնածը Թաքոսն է, նրա կողքին կանգնածը բարձրահասակ Վարոս Արաբյանն է, նստածը Արշաուս Ալեքսանդրյանը, կանգնածը տեսորահար Օնիկ Ղազանչյանն է:

Տերյանի մահվան բոթը Չարենցին հասավ ուշացումով, եւ նա արարեց «Վահան Տերյանի հիշատակին» սքանչելի մի բանաստեղծություն:

Եղիշե Չարենցը տասնյոթ տարեկանում գրեց «Աքիլլա» պոեմը, տասնութում «Դանթեական առասպելը», երեք տարի անց «Սոմա»-ն եւ «Ամբոխները խելագարված»: Բազմադարյան գրականության պատմությունը հազիվ թե նման դեպք հիշի: «Մահվան տեսիլը» քառերեքամյա երիտասարդի գրչով է արարվել, որ մայրենի լեզվով հայ ժողովրդի բախտի մասին 1500 տարվա ընթացքում գրված բացառիկ գործերից է:

Չարենցը թարգմանել է Վերհարն, Գյոթե, Ռեմարկ, Գորկի, Մայակովսկի, Բրյուսով: Նա գրամոլ էր: Այդ կենս բառով ասվում է գրեթե ամեն ինչ: Դեռ կենդանության ժամանակ Չարենց երեւույթի դիմանկարը ստեղծելու համար Մարտիրոս Սարյանը դիմեց եզիպտական դիմակներին: Եվ, այնուամենայնիվ, նրա համար որպես բանաստեղծական հանճարի խորհրդանիշ մնացին Դանթեն, Պուշկինը եւ Գյոթեն: «Ոչ մի բանաստեղծ, ոչ մի պոետ գրել է Չարենցը, ինձ այնպես չի թվում, որ Գրքերի աշխարհը տիեզերք է անեզր...»:

Չարենցի կորուստը հավիտյան ողբալի է: Նա գնաց ու գումարվեց մեր ժողովրդի ժառանգությանը՝ գալիք սերունդներին թողնելով իր գրքերի աշխարհը, որպես անեզր տիեզերք:

ԵՂՈՒՆ ԿԱՆՑՅԱՆ

ՎԻԼՆՅՈՒՍ

Կյանքին հրաժեշտ տվեց հայ պոեզիայի մեծ երկրպագուն եւ քարեկամը



77 տարեկանում Վիլնյուսի հիվանդանոցներից մեկում վախճանվեց լիտվացի մեծ բանաստեղծ Էդուարդաս Մեժելայտիսը: Բանաստեղծ-նորարարը, իր ստեղծագործության ճնարական-փիլիսոփայական եւ քաղաքացիական պաթոսով անուրանալի վաստակ ունի թե՛ ազգային, թե՛ խորհրդային գրականության առջեւ:

Գեղեցիկ ու անգնահատելի է է. Մեժելայտիսի ներդրումը հայ դասական եւ արդի պոեզիայի թարգմանության անդաստանում: Նրա գրչին են պատկանում Ն. Քուչակի «Հայրենիքի», Նարեկացու «Մատյան ողբերգության» (հատվածաբար), Պ. Սեւակի, Հ. Սահյանի, Ս. Կապուտիկյանի, Վ. Դավթյանի, Հ. Հովհաննիսյանի, Ս. Մուրադյանի... երկերի թարգմանությունները:

Հիշատակի տուրք մատուցելով հայ պոեզիայի մեծ բարեկամին, «Ազգ» թերթը մոտակա համարներում նախատեսում է տպագրել Էդուարդաս Մեժելայտիսի հոդվածը՝ «Վաղ շրջանի Չարենցը» խորագրով:

Թումանյանն անմահ է, եթե նրա եւ մեր միջեւ կան այսպիսի միջնորդներ

Տասնյակ տարիներ հանրապետության լավագույն դպրոցների թվում իր հատուկ տեղն ունի Երեւանի թիվ 136 միջնակարգ դպրոցը, որի տնօրենն է մանկավարժ Գրետա Թունյանը: Կրթական օջախ, որ մեր մոտիկ անցյալի ամենադժվար ժամանակներում իսկ նվիրյալ ուսուցչական կազմով համալրված, ջանք չխնայեց չկորցնելու իր մասնագիտական եւ բարոյական բարձր կոչումը՝ մատաղ սերնդին կրթելու, քաջալերելու, փայփայելու:

...Այդ օրը դպրոցի մթնոլորտը հագեցված էր հեքսթրթիր իրադարձության սպասումով: Դա՝ մանկավարժ, բանաստեղծ Անահիտ Բեգլարյանի՝ Հովհաննես Թումանյանին նվիրված բաց դասն էր: Հաճելի անակնկալով սկսվեց այն, դասարանում զետեղված էին գրավյորեն պատրաստված պլակատներ, Հովհաննես Թումանյանին ընծայված մեծերի՝ Կոմիտասի, Բրյուսովի, Չարենցի, Սարյանի, Իսահակյանի, Աբեղյանի, Տիշինայի, Շիրազի գնահատականներով: Հնչում էին դրվագներ Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայից, եւ բոլորիս համար բանկ հուշեր արթնացնող Սարոյի կերպարի անզուգական մարմնավորող Ավագ Պետրոսյանի ձայնը:

Բաց դասեր շատ ենք լսել, բայց այն, ինչ տեսանք ու լսեցինք՝ բացառիկ էր, հոգեզմայլ: Երիտասարդ, բայց փորձառու մանկավարժը վերլուծական յուրատեսակ մոտեցմամբ ներկայացրեց մեծ բանաստեղծի պոեմը: Երկի ճնարական-փիլիսոփայական՝ ոլորտը, գեղջկական կենցաղն ու բարքերը, նահապետական աշխարհայացքի ու սիրո, միջավայրի եւ անհատի բախումները, մարդու եւ բնության տրամադրությունների ներփոխանցումը, սիրո հավերժ գաղափարի հաղթանակը՝ ահա այս էին այն հիմնահարցերը, որ կարեւորեց Անահիտ Բեգլարյանը, դրանցից ամեն մեկն ուղեկցելով աշակերտներին մաչելի, բայցեւ խորհրդաստ եզրահանգումներով: Եթե ավելացնենք, որ ուսուցչի այս վերլուծությունները զուգակցվում էին աշակերտների վերլուծական մեջբերումներով, պոեմի հատվածների ասմունքով եւ մինչեւիսկ խմբերգային երգով ու մենեգերով, ապա վստահորեն կարող ենք ասել, որ դպրոցի տնօրինությանը, հյուրերին (ներկա էին ՀՀ կրթության եւ գիտության նախարարության տեսուչ պրն Սաշիկյանը, լրագրողներ), ծնողներին ներկայացվածը ոչ թե սովորական բաց դաս էր, այլ... գրական-երաժշտական կոմպոզիցիա, որ համեմված էր զգացմունքային պաթոսով ու անպաճույճ անկեղծությամբ: Վեհ ու գեղեցիկ ճնարական պահեր պարգեւեցին ներկաներին բարձրդասարանցիներն ու իրենց դասղեկը: Ու պահեր էին լինում, որ մոռանում էիր՝ դասարանում ես գտնվում, թե համերգասրահում, կամ, միգուցե պարզապես ինքդ էլ ներկա ես դառնում երիտասարդ սիրո զույգերի դրամայի իրադարձություններին, որոնք իրենց ասմունքով ու երգով այնքա՜ն հուզաթաթավ ու ստաբարժ ներկայացրեցին աշակերտներ Սիլվարդ Մայիլյանը եւ Հովսեփ Շահինյանը: Եվ դիտելով ու լսելով նրանց, իսկապես, կարելի էր հավատալ, թե ոչ առջեւ այսօրվա Անուշն ու Սարոն են, քանզի ոչինչ չի փոխվել Տիեզերքում մեծ լոռեցու ժամանակներից... Սիրո դասը այստեղ էլ կարելի է անվանել թիվ 136 դպրոցի բարձրդասարանցիների եւ ուսուցչուհի Անահիտ Բեգլարյանի ներկայացրած կոմպոզիցիան: Զուգահեռներ անցկացնելով հայ բանաստեղծի եւ համաշխարհային ճնարերգության սիրային այլ հերոսների միջեւ՝ դասատուն ամփոփում է. «Օրինակները շատ են, եզրակացությունը մեկը՝ Սիրո գինը՝ Սերն է»:

Իսկ հանճարեղ լոռեցու ոգեղենության գինը՝ նրա անմահ հիշատակն է ու երկրպագությունը:

Լռում են Անուշի ու Սարոյի ողբերգության արձագանքները, յուրաքանչյուր անգամ նոր սոի թողնելով մերսրտերում: Եվ լռության միջից հառնում են բանաստեղծի «Թմկաբերդի առումը» պոեմի տողերը: Երկի ստեղծման պատմական աղբյուրի, բովանդակության կոլիզիաների վերլուծությամբ եւ ասմունքով այս անգամ հանդես է գալիս ինքը՝ Անահիտ Բեգլարյանը: Արտասանությունն այնքան վայելուչ է եւ նկարագրությունն՝ պատկերավոր, որ կինոժապավենի նման երեւակայությանդ մեջ ընծայվում թումանյանական պատումը: Ջերմագորով շնորհակալության զգացմունքով են շրջապատում մանկավարժին ներկաները, եւ ծնողներից մեկի խոսքն, ասես, ամփոփում է բոլորի մտածածն ու զգացածը, «Թումանյանն, իրապես, անմահ է, եթե նրա եւ մեր միջեւ կան այսպիսի միջնորդներ»:

ՏԵՐՄԱ ՍԱՐԳՍՅԱՆ,
վաստակավոր մանկավարժ

Համերգ-ողջույն Փարաքարի մշակույթի տանը

Հունիսի 11-ին Հայաստանի Թեթեյան մշակութային միության եւ Փարաքարի «Ազաս» ՍՊԸ-ի (նախագահ Գ. Պետրոսյան) նախաձեռնությամբ կազմակերպվեց համերգ-ողջույն Փարաքարի միջնակարգ դպրոցի շրջանավարտների պատվին:

Ողջույնի խոսքով հանդես եկավ ԹՄՄ վարչության քարտուղար, գրող Սերգեյ Գալստյանը: «Մի քանի օր առաջ դպրոցներում հնչեց վերջին զանգը: Դրանք հրաժեշտի զողանջներ էին՝ հրաժեշտ դպրոցին: Շնորհավորելով շրջանավարտներին, նրանց մաղթենք նաեւ հաջողություն ուսումը շարունակելու բնագավառում», նշեց Գալստյանը:

Համերգ-ողջույնը կազմակերպված էր Երեւանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի ժողովրդական նվագարանների ֆակուլտետի ուսանողների մասնակցությամբ:

Շնորհավորական խոսքով հանդես եկավ դպրոցի տնօրեն Ֆ. Ջաքարյանը:

Վերջում «Ազաս» ՍՊ ընկերության կողմից 36 շրջանավարտները ծաղիկներ եւ նվերներ ստացան:

ԱԶԳ

Մարզական

ՀՐԱՏԱՊ

Կո'ւժ, քեզ եմ ասում, կուլա, դու լսիր

Մեր երեխաների առողջությունը վտանգված է

Թերթում էի Ռուսաստանի Դաշնության սպորտային բժշկության ֆեդերացիայի ամսագիրը եւ աչքովս ընկան 1995 թ. Մանկաբույժների կոնգրեսում դաշտոնապես հրապարակված բժշկական եւ հոգեբանամանկավարժական հետազոտումների արդյունքները: Այսպես, 20 տոկոսից ավելի վեց տարեկան երեխաները դպրոցաս չեն դպրոցին, իսկ 70 տոկոսն ունեն կմախքային տարբեր շեղումներ: Դասարանից դասարան երեխաների առողջությունը վատանում է: Այսպես, 5 անգամ վատանում է տեսողությունը, 4 անգամ մարսողական օրգանների վիճակը, 2-3 անգամ խախտվում է կեցվածքը, 2 անգամ վատանում է նյարդահոգեկան վիճակը: Ուսուցման տարիներին առողջ երեխաների քանակը կրճատվում է 5 անգամ:

Դեռ նախադպրոցական հասակում երեխաների 15-25 տոկոսը ունեն խրոնիկական հիվանդություններ, հաճախ հիվանդացող (տարին 4 անգամից ավելի) երեխաները կազմում են 60-70 տոկոս: Նախադպրոցական եւ տարրական դասարանների աշակերտների 30 տոկոսը ունեն կարդիոռեսպիրատոր համակարգի ֆունկցիոնալ ոչ լիարժեքություն: Ըստ մանկաբույժների կանխատեսման, 20 տարի հետո առողջ երեխաների տոկոսը կիջնի 15-ով: Սա բացատրվում է աղագա մայրերի աղջիկ երեխաների վաղ առողջությամբ: Այսպես, 14-17 տարեկաց հասակում երբ ավարտվում է հասունացման շրջանը, ամեն մի 10-ն ունի դիսգարմոնիկ զարգացում, ամեն մի 4-ը կմախքի տարբեր շեղումներ:

10-15 տոկոսն ունեն տարբեր գինեկոլոգիական հիվանդություններ, 30 տոկոսը մտնում են ռիսկի տարբեր խմբերի մեջ: Իսկ դեռ այսօր նորմալ են ծննդաբերում միայն 20 տոկոսը:

Հատուկ տեղ են գրավում նյարդահոգեկան խանգարումները, ինչը խոչընդոտում է նրանց ուսուցման պրոցեսին, խանգարում սերնդի սոցիալիզացիային: Ավելին, այս երեխաները շուտ ընկնում են հանցագործների ազդեցության տակ: Դպրոցական այսպիսի երեխաների քանակն աճել է 3 անգամ:

Զինակոչիկների 50 տոկոսը չեն կարողանում հանձնել նախատեսված նորմատիվները, այս ամենին գումարենք ավիտամինոզը, օր օրի աճող ծխող, ալկոհոլով եւ թմրամոլությամբ զայրակղվող երեխաների քանակը:

Կարծում եմ, որ Հայաստանում վիճակն ավելի բարվոք չէ: Իսկ այս թվերը չեն խոսում ազգի գենոֆոնդի եւ լուսավոր ապագայի մասին:

Փորձում եմ գտնել պատճառները նորմալ սանիտարահիգիենիկ միջավայրի բացակայություն, սննդի պակաս, նյարդահոգեբանական գերլարվածություն, բժշկական հսկողության համարյա բացակայում, դեղամիջոցների անբավարարություն, այսինքն նորից ու նորից ֆինանս: Այս պատճառների մեջ կան այնպիսիներ, որոնց դեմ կարել է պայքարել ֆիզկուլտուրայի օգնությամբ: Օրինակ, պատճառ է նաեւ ֆիզ շարժելը: Մեր երեխաները 3-6 ժամ անց են կացնում հեռուստացույցի առջեւ (շաս ժամանակ պատկած վիճակում), գումարենք համակարգչային խաղերը, դասաժամերը, ֆիզ բն շաս տնային աշխատանքները կատարելու ժամերը: Փորձերը ցույց են տվել, որ մկանային շարժողականության պակաս ունեցող երեխաների սրտանոթային համակարգը վատառողջ է, ինչը բացատրվում է օրգանիզմի թուլությամբ եւ այլն: Ընդ որում, որ շաբաթական 4 ժամից ֆիզ ծանրաբեռնվածությունը ոչ մի արդյունք չի տալիս:

Էկոլոգիական դիսկոմֆորտը, այսինքն էկոլոգիայի վատացումը, այսօր կրում է համամոլորակային բնույթ: Օգտակար մանրէները պատեսպանելով աղտոտությունից արտադրում են մարդու օրգանիզմում հատուկ պոլիմեր բջիջներ եւ վնասում մեր օրգանիզմին: Փորձերը ցույց են տվել, որ քաղաքում աղքատ երեխաների մոտ բարձր է բրոնխոպուլմոնային սիստեմի հիվանդությունը: Սակայն նույն տեղում աղքատ եւ սպորտով զբաղվող երեխաները տարբերվում են ավելի բարձր իմունոլոգիական կարգավիճակով, քան ավելի բարվոք շրջանների երեխաները: Ֆիզկուլտուրայի պարապմունքները օգնում են նաեւ էնդոէկոլոգիական հիվանդությունների դեմ, որոնց թիվն աճում է: Ասեմ, որ այս հիվանդությունների բուժումը ոչ թե դեղերի ներարկումն է, այլ բույսերի հանումը օրգանիզմից:

Խրոնիկական հիվանդություն. այս հիվանդությունների քանակն էլ տարեցտարի ավելանում է, պատճառը երեխաների օրգանիզմի ֆունկցիոնալ հնարավորությունների նվազումն է: Մեդիկամենտոզ թերապիա, այս դեպքում համարյա անպտուղ է եղել ֆիզկուլտուրան որպես տեսակի լիացիայի միջոց եւ երկրորդական պրոֆիլակտիկա: Նշենք, որ դեղերը բանկ են եւ առողջացնում են տարբեր ալերգիաներ:

Նյարդահոգեկան վիճակի վատացում երեխաների մոտ. սրան նպաստում են տարբեր հոգեկան տրավմատիկ ազդակներ, հաճախ կոնֆլիկտային վիճակներ տանը եւ դպրոցում: Հետազոտությունները ցույց են տվել, որ 50 տոկոս կոնֆլիկտների դեպքում մեղավորը ուսուցիչներն են: Այստեղից էլ դիդակտիկ նեւրոզը, որը մանկական նեւրոզների հիմքն է: Ընտանիքում էլ պատճառները ֆիզ չեն, նշեմ, որ հիմնականը ծնողների մանկավարժական եւ բժշկական անգրագիտությունն է:

Իհարկե, դրությունը դժվար է շտկել, բայց չէ՞ որ բոլորս երեխաների համար ենք աղքում:

ՀԱՄԼԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ
Հայաստանի սպորտային բժշկության ֆեդերացիայի գլխավոր քարտուղար



Ցորից լավագույնը Անգլիան էր

Ֆրանսիայում ավարտվեց «Ցորտ հավաքականների» մրցաշարը: Վերջին մրցամարտում տանտերերը 2-2 հաշվով խաղացին իտալացիների հետ: Մրցաշարում վաղաժամկետ հաղթանակ տարավ Անգլիայի հավաքականը, որը առավելության հասավ ֆրանսիացիների եւ իտալացիների նկատմամբ, բայց պարտվեց Բրազիլիայի հավաքականի հետ խաղում: Վերջինս գրավեց երկրորդ տեղը, քանի որ մեկ հաղթանակ տարավ եւ 2 անգամ ոչ-ոքի խաղաց:

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Անգլիա	3	2	0	1	3-1	6
2. Բրազիլիա	3	1	2	0	5-4	5
3. Ֆրանսիա	3	0	2	1	3-4	2
4. Իտալիա	3	0	2	1	5-7	2

Իսկ Ամերիկայում մեկնարկեց աշխարհամասի գավաթի խաղարկությունը Copa America-97-ը: Առաջին խաղերում գրանցվեցին հետեւյալ արդյունքները. Արգենտինա-Էկվադոր 0-0, Պարագվայ-Չիլի 1-0:



ՇԱԽՄԱՏ

Մեկնարկեց Նովգորոդյան գերմրցաշարը

Շախմատի ասպետները կրկին հանդիպեցին Մեծն Նովգորոդում: Հենց այստեղ շախմատային պատմությունում առաջին անգամ, 3 տարի առաջ անցկացվեց ՖԻԴԵ-ի 19-րդ կարգի մրցաշար: Երկու անգամ հաղթանակ է տոնել ԱՇԱ-ի վարկածով աշխարհի չեմպիոն Գարրի Կասպարովը, իսկ անցյալ տարի՝ բուլգարացի Վեսելին Թոփալովը: Այս տարի նրանց են միացել ռուսաստանցիներ Վլադիմիր Կրամնիկը եւ Եվգենի Բարեեւը, ինչպես նաեւ Բորիս Գելֆանդը (Բելառուս) եւ անգլիացի Նայջել Շորթը: Մրցաշարի, որ կանցկացվի 2 շրջանով, մրցանակային հիմնադրամն է 70 հազար դոլար: Իսկ հովանավորներն են 50-ից ավելի տեղական կազմակերպություններ եւ ձեռնարկություններ: Երեկ խաղաշախտակների առջեւ մրցեցին Կասպարովը եւ Գելֆանդը, Կրամնիկը եւ Թոփալովը, Բարեեւը եւ Շորթը: Սեւերը սպիտակներին հակադրեցին նոր հնդկական, հին հնդկական եւ սլավոնական պաշտպանություն, սակայն դեբյուտում միայն Բարեեւը շոշափելի առավելության հասավ եւ զարգացնելով այն 39-րդ քայլում հաղթեց Շորթին: Սա առաջին հաղթանակն էր այս մրցաշարում:

NBA

«Չիկագոն» առաջ անցավ եզրափակիչ շարքում

ԱՄՆ-ում շարունակվում են բասկետբոլի հյուսիսամերիկյան ասոցիացիայի առաջնության եզրափակիչ փուլի հանդիպումները «Չիկագո բուլզ» եւ «Յուտա ջազ» ակումբների միջեւ: Ջազմենների խաղահրապարակում, Սոլֆիլեյքսիթիում կայացած 5-րդ խաղում Չիկագոյի «ցուլերը» մի փոքր ուժեղ գտնվեցին՝ 90-88: Շարքի ընդհանուր հաշիվը դարձավ 3-2 օգուտ Չիկագոյի: Չնայած մրսածությանը, հիանալի խաղաց «գլխավոր ցուլ», աշխարհի ուժեղագույն բասկետբոլիստ Մայքլ Ջորդանը, որը վաստակեց 38 միավոր: Իսկ խաղավարտից 25 վրկ առաջ նրա երեք միավորանոց նետումը հաղթանակ բերեց «Բուլզին»: Հաջորդ խաղը կկայանա այսօր, նրանց խաղահրապարակում: Տեսնենք, թե մրցակիցներից ում համար այս «սատանայական» օրը կդառնա ճակատագրական:

ՖՈՒՏԲՈԼ

«Լոկոմոտիվը» Ռուսաստանի կրկնակի գավաթակիր

Հայտնի դարձավ Ռուսաստանի գավաթակիրը: Երկրի պատվավոր մրցանակը վիճարկեցին Մոսկվայի «Դինամո» եւ «Լոկոմոտիվ» թիմերը: Առաջին խաղակեսին մրցակիցները փորձում էին թույլ տեղ գտնել հակառակորդի խաղում: Իսկ 26-րդ րոպեին «Լոկոմոտիվի» ֆուտբոլիստների առաջին իսկ սուր գրոհն ավարտվեց: Խաղալաչովը գեղեցիկ փոխանցում կատարեց Սմիռնովին, որն էլ 8 մետրից գրավեց «Դինամոյի» դարպասը: Հանդիպման երկրորդ կեսին դինամոյականները առավելագույն ջանքեր գործադրեցին խաղի հաշիվը փոխելու համար: Հիշարժան էր Կոբելեւի հարվածը, որը դժվարությամբ ետ մղեց դարպասապահ Օվչիննիկովը: Այնուամենայնիվ, «Լոկոմոտիվը» պատասխանեց հակագրոհով, որը չարդարացրեց «Դինամոյի» ֆուտբոլիստների փրկության հույսերը: Աջ եզրից Սոլոմատինը գնդակը հաջվենկաս հասցեագրեց խաղալաչովին, որը չվրիպեց: Մրցավարի եզրափակիչ սուլոցը արձանագրեց «Լոկոմոտիվի» հաղթանակը: Երկրորդ տարին անընդմեջ Յուրի Սյոմինի թիմը չի բաժանվում գավաթից:

Ֆրանսիա-98-ի ընտրարտավը տարբեր աշխարհամասերում

Կայացան ֆուտբոլի աշխարհի առաջնության ընտրական մրցաշարի հերթական փուլի հանդիպումները Հյուսիսային եւ Կենտրոնական Ամերիկայում, Աֆրիկայում, Ասիայում եւ Օվկիանիայում:

ԿՈՆԿԱԿԱՖ

Սալվադոր-Մեխիկա՝ 0-1

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Մեխիկա	5	3	2	0	13-2	11
2. Կոստա Ռ.	5	2	1	2	7-6	7
3. ԱՄՆ	4	1	2	1	7-5	5
4. Կանադա	5	1	2	2	1-7	5
5. Ճամայկա	5	1	2	2	2-9	5
6. Սալվադոր	4	1	1	2	2-3	4

Աֆրիկա

Խումբ 1

Նիգերիա-Քենիա՝ 3-0

Գվինեա-Բուրկինա Ֆասո՝ 3-1

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Նիգերիա	5	4	1	0	10-3	13
2. Գվինեա	5	3	0	2	9-5	9
3. Քենիա	5	2	1	2	7-10	7
4. Բուրկինա Ֆ.	5	0	0	5	5-13	0

Խումբ 2

Եգիպտոս-Թունիս՝ 0-0

Լիբերիա-Նամիբիա՝ 1-2

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Թունիս	5	4	1	0	6-1	13
2. Եգիպտոս	5	2	1	2	10-5	7
3. Լիբերիա	5	1	1	3	2-5	4
4. Նամիբիա	5	1	1	3	6-13	4

Խումբ 3

ՀԱՀ-Զամբիա՝ 3-0

Կոնգո-Զաիր՝ 1-0

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. ՀԱՀ	5	3	1	1	6-3	10
2. Կոնգո	5	3	1	1	5-4	10
3. Զամբիա	5	1	2	2	5-6	5
4. Զաիր	5	0	2	3	4-7	2

Խումբ 4

Անգլիա-Կամերուն՝ 1-1

Տոգո-Զիմբաբվե՝ 2-1

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Կամերուն	5	3	2	0	7-2	11
2. Անգոլա	5	2	3	0	5-2	9
3. Զիմբաբվե	5	1	1	3	5-5	4
4. Տոգո	5	1	0	4	5-13	3

Խումբ 5

Մարոկկո-Գանա՝ 1-0

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Մարոկկո	5	4	1	0	12-2	13
2. Գանա	5	1	3	1	7-5	6
3. Սիեռա L.	4	1	1	2	2-6	4
4. Գաբոն	4	0	1	3	1-9	1

Ասիա

Խումբ 2

Ղազախստան-Մալդիվներ՝ 3-0

Իրան-Սիրիա՝ 1-0

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Իրան	3	3	0	0	25-0	9
2. Սիրիա	2	1	0	1	12-1	3
3. Ղազախստան	2	1	0	1	3-7	3
4. Մալդիվներ	3	0	0	3	0-32	0

Խումբ 8

Վիետնամ-Թուրքմենիա՝ 0-4

Չինաստան-Տաջիկստան՝ 0-0

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Չինաստան	5	4	1	0	9-2	13
2. Տաջիկստան	5	3	1	1	10-2	10
3. Թուրքմենիա	5	2	0	3	8-8	6
4. Վիետնամ	5	0	0	5	2-17	0

Օվկիանիա

Խումբ 2

Ֆիջի-Նոր Զելանդիա՝ 0-1

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Պապուա Նոր Գվինեա	1	1	0	0	1-0	3
2. Նոր Զելանդ.	2	1	0	1	1-1	3
3. Ֆիջի	1	0	0	1	0-1	0

ԱԶԳ

Օրվա հեռանկար

Մարդկային զարգացման զեկույցի շնորհանդեսը

Լուծելի՞ է աղքատության խնդիրը

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) գրասենյակը, ի թիվս աշխարհի մյուս գրասենյակների, հունիսի 12-ին ղաբեռնաղրեց հայտարարեց 1997 թ. Մարդկային զարգացման զեկույցի լույսընծայման մասին: Այս տարվա տարբերակի գլխավոր հեղինակը Ռիչարդ Ջոլլին է (Գերմանիա): ՄԱԶԾ-ն Համաշխարհային մարդկային զարգացման զեկույցներ (ՄԶԶ) սկսել է կազմել 1990 թվականից ի վեր: 1993-ից Ազգային ՄԶԶ-ներ սկսեցին ղատրաստել առանձին երկրները: Հայաստանում աշխատանքներն սկսեցին 1995-ից: Այս տարվա թվով երրորդ Ազգային զեկույցը կներկայացվի հոկտեմբերի 17-ին, ՄԱԿ-ի հոչակած Չքավորության վերացման օրը: Օրը ղատահաբար չէ ընտրված, քանի որ այս տարվա Համաշխարհային զեկույցը նվիրված է «Սոցիալական ներդաշնակ առաջընթացը» թեմային: «Հնարավոր չէ խոսել այլ կարեւորագույն խնդիրների լուծման մասին, քանի դեռ չենք լուծել չքավորության խնդիրը», սա ՄԱԶԾ տնօրենի հայտարարությունն է: 1995 թ. Սոցիալական զարգացման համաշխարհային վեհաժողովի ժամանակ մեծ երկրների ղեկավարները հանգել են այն եզրակացության, որ միանգամայն հնարավոր է 21-րդ դար մուտք գործել հաղթահարած ծայրահեղ աղքատության խնդիրը:

Ի դեղ, կա աղքատության գնահատման երկու տարբերակ: Եթե նախկինում դա զուգակցվում էր միայն եկամուտների հետ, աղա այսօր դիտարկվում են այն նվազագույն կենսաղայմանները, որոնք անհրաժեշտ են մարդկային գոյության համար: Հետաքրքրական է, որ աղքատության սահմանագիծը համարվում է օրական 1 դոլար եկամուտը: ՄԱԿ-ի հայկական գրասենյակի եւ ՄԱԶԾ ղեկավար տիկին Կ. Չեկալովիչը շնորհանդեսի ընթացքում նշելով այս փաստը, թվարկեց այն յոթ երկրները, ուր աղքատությունն առավել չափով է տարածված, իսկ 30 երկրներում այս տարի մարդկության զարգացման համաթիվը սանդղակից ցած է իջել: Հայաստանն այդ շարքում, իհարկե, չկար: Դրա փոխարեն ՀՀ սոցիալական աղահովության նախարար տիկին Հ. Հակոբյանը փաստեց, որ Հայաստանում յուրաքանչյուր երրորդը ծայրահեղ աղքատության սահմանագծից ցածր է գտնվում: Ասենք, որ 96-ի Ազգային ՄԶԶ-ում նշվում էր, որ Հայաստանում նվազագույն աշխատավարձը հավասար է 17 դոլարի, եւ սա անշուշտ համեմատելի չէ վերոնշյալ օրական 1 դոլար չափանիշի հետ:



Աժ սոցիալական հարցերով հանձնաժողովի նախագահ Գ. Ղարիբջանյանը իր հերթին վկայակոչեց կողենհագենյան համաժողովի որոշումները 21-րդ դար հասնել լուծած սոցիալական սեւ տաճման, աղքատության դեմ պայքարի, զբաղվածության ընդլայնման խնդիրները: Շեշտելով, որ չի կարող լինել էկոլոգիապես կործանվող Հայաստան եւ առողջ հասարակություն, ինչպես եւ հակառակը, նա ասաց, որ մեզնից յուրաքանչյուրը պետք է ամեն ինչ անի գտնելու խնդիրների լուծման բանալին:

25 տրիլիոն ծավալ ունեցող տնտեսության պայմաններում մարդկության 1/4-ն աղքում է խիստ չքավորության պայմաններում, սա ՄԶԶ-ն որակում է որպես «ամոթալի անհավասարության արտացոլում, եւ ազգային ու միջազգային քաղաքականության աններելի պարտություն»: Սակայն կողենհագենյան հայտարարությունները իրականանալի են համարվում, քանի որ վերջին 50 տարիների ընթացքում աղքատությունը ավելի է նվազել, քան նախորդ 500 տարիներին:

Աղքատության նվազման առաջին նախապայմաններից դիտարկվող տնտեսության զարգացումը միշտ չէ, որ նպաստավոր է ամբողջ հասարակության համար: Տնտեսական աճի հետեւանքով Ինդոնեզիայում, Մալայզիայում, Կորեայում աղքատությունը կրճատվել է, սակայն այն ոչ մի օգուտ չի բերել Բրազիլիայի աղքատներին: 1.3 միլիարդ մարդ գոյատեւում է օրական 1 դոլար եկամտի չափով, 1 միլիարդն անգրագետ է, ավելի քան 1 միլիարդ մարդ խմելու ջուր օգտագործելու հնարավորություն չունի, 840 միլիոնն անոթի է:

Հանդուրժելի կյանքով ապրելու ընտրության եւ հնարավորությունների ժխտումը, սա է աղքատության նորօրյա մեկնաբանությունը, եւ այս չափանիշներով պետք է առաջնորդվել լուծումներ որոնելիս: Տիկին Հակոբյանը հույս հայտնելով, որ ՄԱԶԾ-ն կօգնի հայաստանյան պետական եւ ոչ պետական կառույցներին խնդիրը լուծելիս, ավելացրեց, որ աղքատության դեմ պայքարի հետագա քաղաքականությունը պիտի լինի հասցեագրված: Ամփոփելով «Փարոս» հանդեսի ակարգին նա հայտնեց, որ այսօր արդեն ճշտվում են իրական կարիքավորները, որոնց էլ պետությունը հովանու տակ կվերցնի եւ գոյատեւման երաշխիքներ կստեղծի. «ՄԱԿ-ի գրասենյակը օգնում է մեզ ճշգրտել չափանիշները: Ուժերը ճիշտ օգտագործելով կկարողանանք ընտանեկան նպաստի օրենք կամ գաղափարախոսություն մտցնել մեր երկրում»:

ՍՈՆԻ ԳԱԼՍՏՅԱՆ

Ադրբեջանի նավթային պատարները ԱՄՆ-ին սիրտում են ճշգրտել իր քաղաքականությունը

11 ՅՈՒՆԻՍ, «ԱՅՍՏՈՒԹՅՈՒՆ»: Միացյալ Նահանգների Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի Մերձավոր Արեւելքի եւ Հարավային Ասիայի հարցերի հանձնախմբի նորընտիր նախագահ Սեմ Բրաունբաքը վերջերս իր առաջին այցելությունը կատարեց տարածաշրջան: Նա հանդիպեց Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուի, Պաղեստինի ղեկավար Յասեր Արաֆաթի, Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքի հետ, սակայն ամենահետաքրքրականն այն է, որ սենատորի շրջագայության, իր իսկ բնորոշմամբ, մեծ մասը կապված էր Ադրբեջանի հետ: Ահա թե ինչպես է նա բնութագրում այդ երկիրը. «Այս պետությունը սահմանակից է Իրանին, եւ նրա մահմեդական բնակչությունը գերադասում է գործ ունենալ Արեւմուտքի հետ, այլ ոչ թե վերահսկվել Ռուսաստանի կամ Իրանի կողմից» եւ եզրահանգում. «Ամերիկան պետք է ամեն ինչ անի՝ օգնելու մերձկասպյան պետություններին նավթային իրենց հսկայական պատարները Արեւմուտք հասցնելու համար: Ռուսաստանին եւ Իրանին դա դուր չի գա, բայց դա իրենց խնդիրն է», ասել է սենատորը «Վաշինգտոն փոստ» թերթի թղթակցին: Իսկ «Ամերիկյան մեկ այլ ազդեցիկ թերթ՝ «Ջոռնալ օֆ Քոմերսը», երեկ տպագրեց ԱՄՆ-ի էներգետիկայի նախարարի նախկին օգնական Ռոբերտ Բեյլսի հոդվածը՝ նվիրված Անդրկովկասին եւ այդ տարածաշրջանի հանդեպ ԱՄՆ-ի վարած քաղաքականությանը: Նկարագրելով Վրաստանի եւ մանավանդ Ադրբեջանի ռազմավարական մեծ նշանակությունը, որպես էներգակիրների աղբյուրներ ու դրանց տարանցիկ փոխադրման տարածքներ եւ ընդհանրապես չանդրադառնալով Հայաստանին, հոդվածագիրը նշում է, որ դարաբաղյան հակամարտությունը բացասաբար է անդրադարձել ԱՄՆ-Ադրբեջան հարաբերությունների վրա: «Հայկական լոբբիի ուժեղ ճնշման ներքո ընդունվել է մի խստական օրենսգիծ, որն արգելում է ամեն տեսակի ամերիկյան անմիջական օգնության տրամադրում Ադրբեջանին, մինչ նախագահը չփաստի, որ Ադրբեջանը ակնհայտ քայլեր է ձեռնարկում Հայաստանի նկատմամբ հարձակողական գործողություններին եւ շրջափակմանը վերջ դնելու ուղղությամբ: Ամերիկան մարդասիրական օգնություն է տրամադրում աշխարհով մեկ, նույնիսկ այնպիսի երկրների, ինչպիսին է Հյուսիսային Կորեան: Սակայն վերոհիշյալ օրենքն արգելում է օգնության հատկացումը Ադրբեջանի 1 մլն փախստականներին: Մի երկրի, որը բարեկամական է տրամադրված ԱՄՆ-ի նկատմամբ եւ խրախուսում է ամերիկյան ներդրումները: Անհրաժեշտ է վերանայել այս օրենքը», կարծիք է հայտնում Ռոբերտ Բեյլսը, ավելացնելով. «Ժամանակն է գործել հենց այժմ»:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
3 սենյականոց բնակարան, 9 հարկանի շենքի, 1-ին հարկում, Էրեբունու զանգվածում: Ունի մեծ նկուղ, տնտեսական պատշգամբ, 45 քմ բնակմակերեսով: Գերազանց վերանորոգված է:
Հեռ. 47-07-22, 58-18-41

ՇՏԱՊ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
2 սենյականոց բնակարան 5 հարկանի քառ. շենքի 1-ին հարկում. Հարմար է նաեւ օֆիսի համար Դեմիրճյան 17 շենք:
Հեռ.՝ 523056, 581841

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
երկհարկանի տուն առանց ներքին հարդարանքի Նոր Արեշ 31 փողոցում: Հեռ.
45-59-99, 58-18-41

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀՐԱՄԱՆՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՀԱԿՅԱՆԻ ՀՐԱՄԱՆՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒ

ԶԻՆԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄՆԵՐ

Նազարբաեւն էլ միացավ դատապարտողներին

ԲԱՔՈՒ, 12 ՅՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւը հանդես է եկել Հայաստանին ռուսական սպառազինության անօրինական մատակարարումների դատապարտմամբ, հայտարարելով, որ «գաղտնի զենք հանձնել Համագործակցության պետություններից մեկին ի վնաս մյուսի՝ չի տեղավորվում որեւէ շրջանակում»: Այս մասին Ղազախստանի նախագահը հայտարարել է Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւի հետ համատեղ մամլո ասուլիսում, որ կայացել է Ալմաթիում: Ն. Նազարբաեւը հույս է հայտնել, որ զենքի մատակարարման փաստը ռուսական կողմի ընդունելուց եւ ՌԴ դատախազության պարզաբանումից հետո հետաքննության արդյունքները հրապարակվելու են:

Շարադրելով Ղազախստանի դիրքորոշումը դարաբաղյան հարցի վերաբերյալ, Ն. Նազարբաեւը հայտարարել է, որ դեմ է ցանկացած անջատականության: Նա հիշեցրել է, որ ԱՊՀ բոլոր պետությունները ԵԱՀԿ անդամ են եւ ընդունում են Փարիզի հռչակագիրը, որի հիմնական սկզբունքներն են տարածքային ամբողջականությունն ու անջատականության անընդունելիությունը:

Կողոպտվել է ստամբուլցի հայ մուրճակավաճառը

ՍՏԱՄԲՈՒԼ, 12 ՅՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Թուրքական «Սաբահ» թերթը գրում է, որ Ստամբուլում կողոպտվել է «արհաների մուրճակավաճառ» Տիգրան Զոփիյանի խանութը: Երկու անծանոթներ, որոնցից մեկը կին, զենքի սպառնալիքով Թոփիյանի դրամարկղից վերցրել են 100 միլիոն լիրա (մոտ 10 հազ. դոլար) եւ անգլիական ու եգիպտական դրոշմանիշերի թանկարժեք մի հավաքածու: Իրավապահ մարմինները փնտրում են կողոպտիչներին:

"Սասուն Միհայելյան" Ավագ դպրոցը
Կազմակերպում է 1997-98 ուսումնական տարվա ընդունելություն հետեւյալ հոսքերում.
8-րդ դասարան. ֆիզմաթ 15 տեղ, հումանիտար 15 տեղ: 9-րդ դասարան. ֆիզմաթ 12 տեղ, հումանիտար 12 տեղ, տնտեսագիտական 12 տեղ, դատամիրավաբանական 12 տեղ, բնագիտական 12 տեղ, անգլերեն եւ կոմպյուտերային գրագիտ 16 տեղ: 10-րդ դասարան. ֆիզմաթ 4 տեղ:
Նախատեսվում է ընդունելություն առաջին - երկրորդ դասարաններ անգլերեն - ռուսերեն խորացված ուսուցմամբ:
Ավագ դպրոցի շրջանավարտները հանրակրթական դպրոցի ավարտական վկայականի հետ միասին կստանան նաեւ արտոնագիր թեքումով դպրոցի համապատասխան հոսքը ավարտելու վերաբերյալ, կոմպյուտերային գրագիտության վկայական եւ հարցազրույցով ընդունվելու իրավունք ՀՀ բուհերի այն ֆակուլտետներ, որոնք համապատասխան արտոնություն կստանան ՀՀ Կրթության եւ գիտության նախարարության կողմից: Ուսանողները անվճար օգտվում են դպրոցի էլեկտրոնային փոստից (e-mail: student@mikael.arminco.com):
Ուսուցումը իրականացվում է խորացված ծրագրերով, հաշվի են առնվում բուհերի ընդունելության քննությունների առավելագույն պահանջները: Մասնագիտական առարկաների դասավանդումը իրականացնում են միայն Երեւանի պետական համալսարանի, այլ բուհերի փորձառու դասախոսներ:
Մանրամասնությունների համար դիմել Ավան, Թումանյան թաղամաս, 3, թիվ 170 դպրոցի մասնաշենք:
Հեռ. 61-34-37
E-mail: hmikael@mikael.arminco.com կամ root@mikael.arminco.com

ԼՈՒԾԱՐՎՈՒՄ Է
«ՇԱԽ-1» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, գրանցված Մյասնիկյանի շրջանի պետռեգիստրի բաժնում:
Վկայական 01Ա N021344:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
1997 թ. հունիսի 17-ին, ժամը 12.00-ին կկայանա «Ժողգեղարվեստ» բաց բաժնետիրական ընկերության հետաձգված ժողովը: Խնդրվում է բոլոր բաժնետերերին ներկա լինել ժողովին, ինչպես նաեւ սանալ իրենց բաժնետոմսի հավաստագիրը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Կիսնամեմ երեխա 10 ամսականից բարձր տարիքի:
Հեռ. 24-88-56, 22-69-30

ՇՏԱՊ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
3 սենյականոց բնակարան 5 հարկանի քառ. շենքի 5-րդ հարկում, 70/50 քմ, ավտոնկակով: Հրաչյա Քոչար 23 (նախկին Չեկի խանութի մոտ):
Հեռախոս՝ 22-42-68

Robin Generators RGX3500
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
բենզինով աշխատող միաֆազ էլեկտրագենեռատորներ: ☎ 529353

հաճախակ.	մաքս. հզ.	նոմ. հզ.	աշխ. ժամ	տարող.
50 Հց	3.0 Կվտ	2.5 Կվտ	7.1 ժ	13 լ
60 Հց	3.5 Կվտ	3.0 Կվտ	6.1 ժ	



«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԻ ԵՎ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ՄԱՍԻՆ ՀԵՌԱԽՈՍՈՎ՝ 589167, 581351

«Պարբերական» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արեգակունեաց 2. Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատուեր 597. Տպաքանակը՝ 3000. Ստորագրված է տպագրության՝ 11.06.1997. Գինը՝ 100 դրամ